


ՀԱՅՈ-ՊԵՏԱԿԱՆ ՀԵՐԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ


ԳՐԱԲԱՐԻ ԴԱՍԱԳԻՐՔ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ



Վ Բ Ի Պ Ա Կ Ա Ն Ե Ր

Էջ	Տար	Տպագրման էտ	Գիրությունից
130	17	սա	ըստ
130	24	ընդ-ունիժմ, ըմ-պեմ, ընդկալում	ընդ-ունիժմ, ընդկալում
136	12	տառնութերորդ դարում	տառնութերորդ տարում



ԴԱՍ ԺԳ

Իսկ իշխանն իրքե գիտաց, եթէ յայտնեցաւ խորամանկութիւն խորհրդոցն, սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիսս իւրոյ չարութեանն և անբժշկական վէրս յոզիս և ի մարմինս տեսանելը:

Մերթ շանթէր, գալարէր իրքե զօձ թաւնաւոր, մերթ պարզէր զոչէր իրըն զասիւծ զայրացեալ զերյը և տաղալէր երկադիմի մտօք, զիորհուրդս կամացն կամէր կատարել: Քանզի ձեռն արկանել և ունել ոչ կարէր—վասն զի ոչ էին համազունդ ի միում վայրի—սկսաւ այնուհետեւ յառաջ կոչել զկրասերս յաւազ և զանարդս ի պատուականաց և զոգէսս ի գիտնոց և զանարիս ի քաջ արանց, և զի՞ մի մի թուիցեմ, այլ զամենայն արժանաւորուն յետս տանէր, մինչեւ զայր և զորդի քակէր ի միմենց (Եղիշէ):

Իրքե գիտաց—երք որ իմացավ	Եր, թավալվում էր
Խորամանկութիւն	Երկդիմի—երկերեսանի, կեղծ
Խորդոցն— նենդ, խորամանկ	Զիորհուրդս կամացն— կամ-
	քըն ու միտքը
Մացուտել—չարաչար վիրավորել	Քանզի—որովհետեւ
Զմիսս չարութեանն	Զեռն արկանել—ձեռք ձգել
իւրոյ—իր չար միտքը	Ունել—բանել
Անբժշկական վէրս— անբուժելի	Ոչ կարէր—չէր կարողանում
	Ոչ էին համազունդ—համա-
Շանթել—խայթել	խմբված չէին
Գալարիլ—ուլորվել, փաթաթվել	Ի միում վայրի—մի տեղում
Պարզիլ—ձգվել մեկնվել	Առ նմա—նրա մոտ
Իրքե զասիւծ զայրացեալ—ինչ-	Յառաջ կոչել—առաջ կանչել,
պես կատաղած առյուծ	առաջ քաշել
Գելոյը (գելուլ)—ոլորվում, տանջ	Զկրտսերս յաւագաց—ավագնե-
	րի (մեծերի) փոխարեն
Տաղալէր (տաղալիլ)—գլորվում	կրտսերներին (փոքրերին)

Զանարիս ի քաջ արանց—քաջ
 մարդկանց (քաջերի) փոխա-
 րեն վախկոտներին
 Անարի—վախկոտ, նշանակում է
 նաև ոչ պարսիկ
 Զի՞ մի մի թուցեմ—ի՞նչ
 մեկ մեկ թվեմ

Յնտո տանէր—հայէր, տանում
 Մինչև—մինչև անգամ, այս-
 պես որ
 Բակել—քանդել, բաժանել
 Մինչև զնայր և զորդի քակէր ի-
 միմեանց—այնպես որ, հորը
 սրդուց բաժանում էր, ինա-
 ռից

ԻՐԻԵՎ ԲԱՌԸ

Իրբե բառը գործ է ածվում բայերի և գոյականելով՝ ու-
 ղոյականաբար գործածվող բառերի հետ:

Բայերի հետ գործածվելով դրվում է միօտ նախադաս և
 թարգմանվում երբ որ: Օրինակ՝ իրբե գիտաց=երբ որ իմացավ,
 իրբե ետես=երբ որ տեսավ և այն:

Գոյակաների և գոյականաբար գործածվող բառերի հետ-
 պրվում է միշտ նախադաս և թարգմանվում ինչպիս. այս գլու-
 քում իրբե բառի խնդրառուն գառնում է զ նախզիրը: Օրինակ՝
 իրբե զարծուի սրաթե=ինչպես սրաթե արծիվ, իրբե գրառման
 մի կատաղի=ինչպես մի կատաղի գազան և այլն:

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ

(Կամ ապառնի առաջին)

Ապառնի առաջինը կամ ստորագառական ապառնին համա-
 պատասխանում է աշխարհաբարի ենթադրական կամ պայմա-
 նական եղանակին, հաճախ նուև արտահայտում է հարկագրա-
 կանի և ըգձականի իմաստ:

Գրաբարում բայերի ստորագառական ապառնին կազմե-
 լու համար անհրաժեշտ է իմանալ ել (իւ), աւ ուշ էական բայե-
 րի ստորագառական ապառնի ժամանակի կազմությունը, որ
 հետեւյալն է:

b (ի)

Ա

ՈՒ

Եղակի ից~եմ—ից~իմ

այց~եմ

ուց~ում

ից-ես	ից-իս	այց-ես	ուց-ուս
ից-է	ից-ի	այց-է	ուց-ու

Յոգնուկի

ից-եմք	ից-իմք	այց-եմք	ուց-ումք
ից-էք	ից-իք	այց-էք	ուց-ուք
ից-են	ից-ին	այց-են	ուց-ուն

Ստորագասական ապառնիի վերջավորությունները նույնն
են, ինչ ոք ամանական ներկայի վերջավորությունները:
Ստորագասական ապառնի ժամանակի այս ձևերը միանա-
լով որևէ բայարմատի հետ կազմվում է այդ բայի ստորագասա-
կան ապառնին: Այսպիս:

Ե (Ի) ԽՈՆԱՐՀՈՒՄ

Եղակի

աղաս-իցեմ (կաղասեմ)	աղաս-իցիմ (կաղասվեմ)
աղաս-իցես	աղաս-իցիս
աղաս-իցէ	աղաս-իցի

Յոգնակի

աղաս-իցեմք (կաղասենք)	աղաս-իցիմք (կաղասվենք)
աղաս-իցէք	աղաս-իցիք
աղաս-իցեն	աղաս-իցին

Ներգործ.

Կրավար.

ՈՒ

Ո (գու)

Եղակի

կարդ-այցեմ	կարդ-այցիմ	թող-ուցում	զուցեմ
կարդ-այցես	կարդ-այցիս	թող-ուցուս	զուցես
կարդ-այցէ	կարդ-այցի	թող-ուցու	զուցէ

Յոգնակի

կարդ-այցեմք	կարդ-այցիմք	թող-ուցումք	զուցեմք
կարդ-այցէք	կարդ-այցիք	թող-ուցուք	զուցեք
կարդ-այցեն	կարդ-այցին	թող-ուցուն	զուցեն

Յորժամ զաներեսութէն և զնորին զմշանջենաւոր զօրութենէն
Ժանիցէ ոք, պարտի զմիսս յստակել: Որ ընդ ճառագայթս արե-

գական հայել կամիցի, պարտի զպզտորութիւն աչացն ի բաց
պարզել: Զի եթէ դոքա յերկրի իւրեանց լինիցին, մեղ հանգչեւ
ոչ լինի: Եւ զի՞ մի մի թուիցնմ: Եւ հրաման սաստիկ գոյնապա-
նացն առնէին, եթէ որ յարեւելս առ մեղ գայցէ, թողցեն,
իսկ յարեւելից յարեմուսս անանց լիցի չանապարհ: Ոչ ելանի-
ցիս անտի, մինչև հատուցանիցիս զամենայն ինչս և զտաց-
ուածս...

Յորժամ—երբ որ
Զաներեւութէն— աներեվույթի Մեղ հանգչել ոչ լինի—մեղ
մասին
Զնորին զմշանջենաւոր զօրու-
թենէն—նույնի մշանջենական
հզօրության մասին
Ոք—որեէ մեկը
Ճառիցի—ճառի (այստեղը զձա-
կան է)
Պարտի—պետք է
Ընդ ճառագայթս արեգական հա-
յել կամիցի—կամենա նայել
արեի ճառագայթներին
Ի բաց պարզել—հեռացնել
Երեկրի իւրեանց լինիցին—ի-

րենց երկրում լինեն
Մեղ հանգչել ոչ լինի—մեղ
հանգատություն չի լինի
Եւ զի՞ մի մի թուիցնմ—և ին-
չու մեղ մեղ հաշվեմ
Եւ հրաման սաստիկ առնէին—
և խիստ հրաման էին սալիս
Եթէ որ յարեւելս առ մեղ գայց-
ցէ—թէ ով որ արեւելք, մեղ
մոտ գա

Անանց լիցի ճանապարհ—ճա-
նապարհն անանցանելի լինի
Յարեւելից յարեմուսս— արե-
կելքից արեւելք

Զ ՆԱԽԴՐՈՎ ԲԱՑԱՌԱԿԱՆ

Զ նախդիրը բացառական հոլովի հետ գործածվելով նշա-
նակում է մասին: Օրինակ՝ զի՞նչ պատմեն զդմանէ=բնչ են
պատմում դրա մասին, եկն ենարց զողունէ եղանաց իւրոց=
եկավ հարցընց իր եղբայրների առողջության մասին, գոհանամ-
զեն=շնորհակալ եմ ֆեզնից և այն:

Հետեյալ բայերի ինպիրները զրվում են զ նախդրով բա-
ցառական հոլովով՝ ասեմ, պատմեմ, գոհանամ, կարօտիմ, արտըն-
ջիմ, ճառեմ, վկայեմ, հարցանեմ, խորհեմ և այն:

Կախեմ, ունեմ (բոնում եմ), հարկանեմ, զանց առնեմ
բայերը նույնակես ունեն զ նախդրով բացառական ինպիր և
թարգմանվում են բացառականով: Օրինակ՝ կախեր զփայտէ=
կախվում էր փայտից, կալաւ զձեռանէ=բանեց ձեռքից և այն:

ՀԱՄԱՆՈՒՆ ԲԱՌԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

Համանուն կոչվում են այն բառերը, որոնք արտարերուաթյամբ նույնն են, բայց իմաստով՝ տարբեր: Գրաբարում այս բառերը տարբեր են ոչ միայն բովանդակությամբ, այլև ձևով և Այդ կարգի բառերից են:

Այր—այրի, այրիւ, այրք, այրից
բից այրիւք = քարանձավ
Հայր—հայրի, հայրիւ, հայրից,
իւք=կանանցից վերակացու
Մայր—մայրի, մայրք, մայրից=
մայրի ծառեր
Գայլ—գայլի, գայլիւ, գայլք,
գայլից=բերանական
Փող—փողի, փողիւ, փողից=խո-
զովակ, փողոց, վիզ
Օդ—օդի, յօդէ, օդիւ=ոտնաման
Որբ—որթոյ, որթք, որթոց=խա-
զովի որթ
Դի—դիոյ, դիով, դիոց, դիովք=
դիակ

Այր—առն, յառնէ, արք, արանց
=տղամարդ
Հայր—հօր, հարր, հարք, հարց
(հարանց)=հայր (ծնող)
Մայր—մօր, մարք, մարք
մարց (մարանց)=մայր
(ծնող)
Գայլ—գայլոյ, գայլք, գայլոց
=գայլ (կեղանի)
Փող—փողոյ, փողք, փողոց=
դրամ, դրանա
Օդ—օդոյ, օդով, օդք, օդոց=օդ
Որբ—որթու, յօրթէ, որթուց,
որթուք=հօրթ
Դիք (անեղակ.)—դից (դիոց)
դիք=աստվածներ

ԶԹԵՔՎՈՂ ԲԱՌԵՐ

Գրաբարում կան մի շաբք բառեր, որոնք չեն հոլովվում:
Այս դեպքում նրանց փոխարինում են ուրիշ բառաձեեր, որոնք
հոլովվում են, քեն հոլովվում:

ա) իւն վերջավորություն ունեցող բառերը, որոնք արտա-
հայտում են մի բանի ձայն: Օրինակ՝ հնչիւն, վրնջիւն, բամ-
րիւն, շոնդիւն, շաշիւն, գոշիւն, մոնչիւն, խըխըն-
ջիւն, սոսաւիւն և այլն:

Այս բառերի իւն վերջավորությանը փոխարինում են ումն
միացությունը կամ անորոշ գերբայի վերջավորությունը, այսպես՝
հնչումն, վրնջումն, բամբումն, թնդումն և այլն կամ հնչել-
վրնջաւ բամբեր թնդալ և այլն.

բ) իկ մասնիկ ունեցող բառեր՝ ոպատանեկիկ, մանկիկ-
քաղցրիկ և այլն: Սրանց փոխարեն գործածական են

պատանեակ, մանուկ, նաւ, քաղցր և այլն.

գ) մի շաբք բառեր՝ արտօսը, ծունը, պիտոյ, նախ, զոյ և այլն. սրանց փոխարինով բառերն են արտօս=արտասուք (սեռ, արտասուաց), ծունը=ծունկն (սեռ, ծնկան), պիտոյ=պիտանի (սեռ, պիտանոյ), հաճոյ—հաճելի (սեռ, հաճելոյ) նախ—առաջն (սեռ, առաջնոյ), զոյ=զոհութիւն (սեռ, զոհութեան) և այլն:

ՅԱՐՁԱԿՈՒՄՆ ԱԼԱՆԱՑ Ի ՄԵԶ ԵՒ ՊԱՐՏՈՒՄՆ, ԵՒ ԽՆԱՄՈՒԹԻՒՆ ԱՐՏԱՇԻՍԻ ԸՆԴ ՆՈՍ

Զայսու ժամանակաւ միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս վրաց աշխարհին, մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր: օսողովէ և Արտաշէս զիւրոյ զօրացն բազմութիւն, և լինի պատերազմ ի մէջ երկոցունց ազգացն քաջաց և աղեղնաւ ուրաց: Սակաւ ինչ տեղի տայ ազգ Ալանաց, և գնացեալ անցանէ ընդ զիւրն մեծ կուր, և բանակի առ եղերը զետոյն ի հիւսիսոյ. և հասեալ Արտաշէս բանակի ի հարաւոյ, և գետն ընդ մէջ նոցա (Մովսէս Խորենացի):

Պարտումն—պարտությունը

Զայսու ժամանակաւ—այս ժամ մանակ

Յինքեանս արկանելով—իրենց կրոմը ձգելով

Զկէս վրաց աշխարհին—վրաց աշխարհի կեսը

Մեծաւ ամբոխիւ—մեծ բազմութեամբ

Ծնդ աշխարհու մեր—մեր աշխարհու

Զիւր զօրացն բազմութիւն (զօրացնութիւն իւր)՝ իր բազմաթիվ զորքը

Յ մէջ երկոցունց ազգացն քաջաց և աղեղնաւորաց—երկու քաջն

և աղեղնաւոր ազգերի միջին մասմութիւն—ինամիանալը

Սակաւ ինչ տեղի տայ ազգ Ալանաց—փոքր ինչ հետ է

հանանջում ալանաների ազգը Անցանէ ընդ գետն մեծ կուր

—անցնում է մեծ կուր զիւրը

Գնացեալ—գնալով

Բանակի առ եղերը գետոյն ի հիւսիսոյ—բանակ է զըս

նում գետի ափին հյուսիս սային կողմից

Հասեալ—հանանելով

Ի հարաւոյ—հարավային կողմ մից

Գետն ընդ մէջ նոցա—գետը նրանց միջեզ

Դաս ԺԴ

Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց.
Եկ հաւանեաց աչազեղոյ դստերս Ալանաց
Տալ զպատանիդ.
Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց
Զայլոց դիւցազանց զարմից բանալ զկենզանութիւն
Կամ ծառայեցուցաներով ի ստրկաց կարգի պահել
Եւ թշնամութիւն յաւիտենական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել,

(Մովսէս ԽՈՐԵՆԱՅԻ)

Այր քաջ Արտաշէս—քաջ տղա՛ր
մարդ Արտաշէս
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալան
նաց—որ հաղթեցեր ալանների
քաջ ազգին
Եկ հաւանեաց—Եկ լիքը (հավա-
նիր)
Աչազեղոյ դստերս Ալանաց—ա-
լանների գեղաչյա դստերս
Տալ զպատանիդ—տալ այդ պա-
տանուն
Զի վասն միոյ քինու—սրովհե-
տեվ մի քենի համար
Ոչ է օրէն դիւցազանց—օրէնք
չէ, որ զյուցազունները
Զարմից (զարմ)՝ ցեղերի, տոհ-
մերի
Զայլոց դիւցազանց զարմից—
ուրիշ դյուցազն զարմերի (ցե-
ղերի)
Տանալ զկենզանութիւն՝ կեն-
դանութիւնը վերացնել (ջնջել)
Զայլոց բառի զ նախդիրը «կեն-

դանություն» բառին է. ար-
ձակ դասավորությամբ պետք
է լինի՝ բառնալ զկենզա-
նութիւն այլոց դիւցազանց
զարմից):
Ծառայեցուցանել— ստրուկ
զարձնել,
Ի ստրկաց կարգի պահել,
(պահել, ի ստրկաց կարգի)
—ստրուկների կարգի պա-
հել
Եւ թշնամութիւն, յաւիտե-
նական— մշտնջնական
թշնամություն
Ի մէջ երկոցունց ազգաց քա-
ջաց հաստատել—երկու քաջ
ազգերի մէջ հաստատել
Եւ թշնամութիւն ի մէջ եր-
կոցունց ազգաց քաջաց
հաստատել—և երկու քաջ
ազգերի մէջ մշտնջնական
թշնամություն հաստատել:

ՊԱՏՅԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Պատճառական բայերը ներգործական բայերի սեռն ունեն
ներգործական բայերի այս պատճառական կերպը գոյություն
ունի թե աշխարհաբարում և թե զբարարում:

Աշխարհաբարում պատճառական բայակերպը կազմվում է
ացն, եցն, ցն, մասնիկներով, որոնք ավելանում են անմիջապես
բայարմատին: Օրինակ՝

$\text{Խոս-ել} = \text{խոս} + \text{եցն-ել}$, $\text{զարմանալ} = \text{զարմ} + \text{ացն-ել}$, $\text{թռ-չել} =$
 $= \text{թռ} + \text{ցն-ել}$:

Գրաբարում ըոլոր պատճառական բայերի անորոշ գերբայը
գերջանում է ել, օրինակ՝ բնակե-ել (անորոշ) — բնակեցան-ել
(պատճ.), զարմանալ = զարմաց-ուցան-ել, թռ-չ = թռ-ուցան-
ել, թռդ-ուլ = թռդ-ուցան-ել և այլն:

Պատճառական «ուցան»-ը կազմված է ուցն և ան մասնիկ-
ներից:

Ուցան և ել միացումից կազմվել է ուցանել, որից և թռ-ու-
ցանել, փախ-ուցանել և այլն պատճառական անորոշ գեր-
բարյը:

$\text{Ի՞նչպես} \text{ են} \text{ կազմվում} \text{ պատճառական} \text{ բայերը:}$

Պատճառական բայերը կազմվում են բայերի ցոյական և
պարզ առրիսով հիմքից ավելացներով ուցանել: Այսպես՝

այ ՑՈՅԱԿԱՆ ԱՈՐԻՍՏԻ ՀԻՄՔԻՑ ԿԱԶՄՎԱԾ

Ե (ի)	Ա.	Բ.
-------	----	----

<i>Անորոշ</i> — բնակե-ել	<i>իսպալ</i>	
--------------------------	--------------	--

<i>շրջ-իլ</i>	<i>մեծան-ալ</i>	
---------------	-----------------	--

<i>Աորիստ</i> — բնակե-եց	<i>իսպաց</i>	
--------------------------	--------------	--

<i>շրջ-եց</i>	<i>մեծ-աց</i>	
---------------	---------------	--

<i>Պատճառ</i> — բնակեց-ուցանել	<i>իսպաց-ուցանել</i>	
--------------------------------	----------------------	--

<i>շրջեց-ուցանել</i>	<i>մեծաց-ուցանել</i>	
----------------------	----------------------	--

բ) ՊԱՐՁ ԱՈՐԻՍՏԻ ՀԻՄՔԻՑ ԿԱԶՄՎԱԾ

<i>Անորոշ</i> — իջան-ել	<i>մերձ-են-ալ</i>	<i>թռդ-ուլ</i>
-------------------------	-------------------	----------------

<i>բուսան-իլ</i>		<i>զարթին-ուլ</i>
------------------	--	-------------------

<i>Աորիստ</i> — իջ-	<i>մերձեց</i> —	<i>թռդ-</i>
---------------------	-----------------	-------------

<i>բուս</i> —		<i>զարթ</i> —
---------------	--	---------------

Պատճառ.—իջուցանել մերձեցուցանել : Ծովուցանել
բուսուցանել զարթուցանել
Պատճառական բայերը խոնարհվում են և (ի) խոնարհման
բայերի նման:

Պատճառական բայերի խոնարհման ժամանակ ուցան
պատճառական ածանցը մնում է անփոփոխ, խոնարհվում է
միայն եմ-իմ օժանդակ բայը՝

Պատճառական բայերն ունեն երկու տիպի խոնարհում՝
ներգործական և կրավորական

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲՄՅԱ—ՄԱՏ-ՈՒՑԱՆ-ԵԼ

Ներգործական

Կրավորական

ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ

մատուցան-իմ մատուցան-եմք

մատուցան-իս մատուցան-էք

մատուցան-է մատուցան-են

մատուցան-իմ մատուցան-իմք

մատուցան-իս մատուցան-իք

մատուցան-ի մատուցան-ին

ԱՆՑԱԼ ԱՆԿԱՏԱՐ

մատուցան-էի մատուցան-էաք

մատուցան-էիր մատուցան-էիք

մատուցան-էլ մատուցան-էլին

Կրավորականը չունի առանձին ձև անցյալ անկատարում՝

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԱՊԱՌԵՒ (Ա.Ա.ԶԻՆ)

մատուցանիցեմ (կմոտեցնեմ, մոտեցնեմ)

մատուցանիցիմ

մատուցանիցես

մատուցանիցիս

մատուցանիցէ

մատուցանիցիէ

մատուցանիցեմք
մատուցանիցէք
մատուցանիցեն

մատուցանիցիմք
մատուցանիցիք
մատուցանիցին

ԱՆՑԵԱԼ ԿԱՏՈՒՐԵԱԼ

(առիթս)

մատուցի	(մոտեցիր)	մատուցայ
մատուցեր		մատուցար
մատուցց		մատուցաւ
մատուցուք		մատուցաք
մատուցիք (էք)		մատուցայք
մատուցին		մատուցան

ԱՆՑՄԱՆԱԿԱՆ ԱՊԱՌՆԻ (ԵՐԿՐՈՐԴ)

մատուցից (պիտի մոտեցնեմ)	մատուցայց
մատուցես	մատուցիս
մատուցեէ	մատուցիք
մատուցցուք	մատուցացուք
մատուչիք	մատուչաչիք
մատուցեն	մատուցայն

ա) Առիթսամի բնին (մատուցց) ավելանալով կատարյալի և առառնի երկրորդի գերջավորությունները ոյց մասնիկի ոյ միացնեթյունը շեշտի տեղափոխության հետևանքով դառնում է ու մատուցց +ի=մատուց-ի, մատուցց +ից=մատուց-ից և այլն:

բ) կան մի շարք բայեր, որոնց ուցանել պատճառականի ց հնչյունը փոխարինվում է զ կամ ա հնչյուններով։ Այսպես՝ կորուսանել (փոխ. կորուցանել)՝կորուսի, կորուսեր, կորուսանել (փոխ. կորուցանել)՝կորուսի, փուլուզի, փուլուզեր, փուլուզանել (փոխ. փուլուզանել)՝փուլուզի, փուլուզեր, փուլուզ= փուլուզնել ելուզանել (» ելուզանել)՝ելուզի, ելուզեր, ելուզ*»)= ելուզնել լնկլուզանել (փոխ. լնկլուզանել)՝լնկլուզի, լնկլուզեր, լնկլուզ*»)= լնկլուզնել

*» Այս բառից է ձխնելոյզ (ձռւիլոյզ):

Ընդելուզանել (փոխ. ընդելուզանել) — ընդելուզի, ընդելուզ-
կեր, ընդելուզ = ընդելուզի

գ) Պատճառական բայերը կազմվում են ոչ միայն ուցա-
նել միացությամբ, այլև տամ, առնեմ բայերով, որոնք դրվագ-
են անորոշ զերբայի վրա: Օրինակ՝ ըմպել (ներգործ.), տամ
ըմպել = խմեցնում եմ (պատճ.), տամ զրել = զրել եմ տալիս, աշխատել
ածել (ներգործ) — տամ ածել = բերել եմ տալիս, աշխատել (ներ-
գործ.) — առնեմ աշխատել = նեղացնում եմ և այլն:

ՎԱՍՆ ՏՆԿԵԼՈՅ ԶԱՆՏԱՐՆ ՈՐ ԿՈԶԻ ԾՆՆԴՈՑ

Տնկէ և մայրի մեծ ի հիւսիսոյ կողմանէ գետոյն և որ-
մովք ամրացուցանէ, արգելով ի ներքս այծեմունս երագունս և
զազգ եղջերուաց և եղանց, և ցիս և վարազս, որք ի բազմու-
թիւն աճեցեալ լցին զանտառն: Եւ անուաներ զանտառն-
ծննդոց:

(ՄՈՎՅԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ)

Որմ (որմոյ) — պատ
Ամրացուցանել — ամրացնել
Ազգ — տեսակ, ցեղ
Ցիս — վայրենի էշ

Այծեմունք երագունք — արագա-
վազ ջեյրաններ (վայրի այծեր),
Ազգ եղջերուաց և եղանց —
եղջերուների և եղնիկների
ցեղ

Արգելով ի ներքս — ներսում արգելում է (փակում է)
Որք ի բազմութիւն աճեցեալ — որոնք ածելով և բազմանալով:

ԲԱՐԿՈՒԹԻՒՆ

Բարկութիւն զարիւնն եռացուցանէ, զմարմինն դողացու-
ցանէ, զաչսն այլազունէ, զգոյնն շըջէ, և ամենեիմբ զմարդու-
վայրենի ցուցանէ և տայ աղաղակի բազում մորուախօսու-
թեամբ: Ոչ գեղք մահարերք և ոչ հարուածք կարճի նմանեն-
հարուածոյ բարկութիւնն: ոչ հատումն սրոյ և ոչ այրեցուած
թրոյ կակծեցոցանեն առաւել քան զբարկացողացն: Յորժամ մի-
անգամ զխորհուրդս մարդոյ ըմբռնէ անօրէն ախտն բարկու-
թիւնն, յափշտակէ զմիտոն ի նմանէ և զազանացուցանէ: Ոչ
ամօթ ելլարցն, ոչ խրատ վարդապետաց, հրամանք պատուի-
րանաց զնա ոչ պատկառեցուցանեն ի զեղջ և յաղաշաւ:

Եռացուցանել — յեռացնել, գրգը ~
ոել

Դողացուցանել — գոտացնել

Այլագունել — գույնը փոխել

Աստել — ավելի, քան

Բարկացողացն — բարկացողնե ~
րինը

Խորհուրդ — միտք

Շրջէ (շրջել) — գարձնել, փոխել

Մահենեկմբ — ամեն բանով

Ցուցանել — ցույց տալ

Տայ, աղաղակել — աղաղակել է
տալիս

Մորոսախօսութիւն — հիմար բան
խոսել

Դեղ — թույն

Մահարեր — մեռցնող, մահարեր

Ոչ ճարուածք կարճի — ոչ

կարիճի կծածները

Հատումն — կտրելը

Այրեցուած (այրեցված) —

այրվածը, գաղածը

Կոկծեցուցանել — ցավեցնել

կոկծեցնել

Ախտ — ցավ

Ի նմանէ — նրանից

Գաղանացուցանել — գաղան

գարձնել

Պատկառեցուցանել — պատկառ

անք ազգել

Ոչ պատկառեցուցանէ — պատ

կառանք չի ազգում

Զերջ — զզում, փոշմանություն

Ազաշաւ — զզումն, փոշմանու

թյուն

Ի զերջ և յազաշաւ — զզալու

և փոշմանելու համար

Դաս ԺԵ

Հաճոյ թուեցաւ խորհուրդն թագաւորին և մեծամեծացն, որ
էին ի նմին բանի. հրավարտակս գրէր, անդադեսպանս արձակէր
յամենայն տեղիս տէրութեան իւրոյ: Եւ այս է պատճէն հրու
վարտակին.

«Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ արեաց և անարեաց,
քազմացի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ. դուք ողջ
գիրուք և մեք մեզէն ողջ եմք դիցն օգնականութեամբ:

«Առանց զերջ ինչ աշխատ առնելոյ խաղացաք, զնացաք
յերկիրն յունաց և ասանց զործոյ պատերազմի սիրով մարդա
սիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեզ ի ծառայու
թիւն: Դուք զրարի զմտաւ ածէք և անսպաս լերուք յուրախու
թեան, բայց բան զայս կատարեցէք վաղվաղակի, զոք
ասեմքս:

«Մեք ի մտի եզաք անվրէալ խորհրդովք խաղալ զնալ յաշ-
խացն արելից, աստուածոցն օգնականութեամբ դարձուցա-
նել ի մեզ զտէրութիւնն Քուշանաց. դուք իսրե զհրովարտակս

գայս տեսանէք, անխափան վաղվազակի այրեմի գումարեցէք
առաջի քան զիս, յանդիման լեռուք ինձ յԱպար աշխարհին»:

Հաճոյ թուեցաւ խորհուրդն թաւ Առանց ինչ աշխատ առնելոյ—
գաւորին և մհամամեծացն— առանց որեւէ նեղութիւն

այս միտքը հաճելի (ընդունեա- տալու
թ) թվաց (երեվաց) թագավոր- և ապալ—վրան գնալ ճանա-
րին և մհամամեծներին պարհ ընկնել

Որ էին ինմին բանի—որ նույն կարծիքին էին տակաց կրկը—իրովա-
Հրովարտակու գրեր—հրովար-

տակներ էր զրում Պնդադեսպահ—սուրհանդակ կիրու—նախապահ

Սրձակել—ուղարկել ճանապահ գնել Միկ ի ծառայութիւն—մեզ
Յամենայն տեղիս տէրութեան կիրոյ—գեղի իր թագավոր-
ըստթյան բոլոր կրզմերը

Այս է պատճէն հրովարտակին— այս է այս հրովարտակի օրի- գնել
Յամենակ—օրինակ Միկ իմոյ—իմ թագավորու-
թեան իմոյ—իմ թագավորու-

թյան բոլոր ազգերին Քրայի պատճէն—պարսիկ-
Սրեաց և անարեաց—պարսիկ- ներին և ոչ պարսիկներին

Սրեաց (արոյ, արեաւ, արեի, ա- րեաց)—պարսիկ Զոր ասեմքս—որ մենք ասում
Անսպառ լեռնեք յուրախու- թեան—անվերջ ուրախ ե-
գեք

Չոր ասեմքս—որ մենք ասում Մեք ի մտի հղաք—մտքում
Անվերջ գրինք—անսխալ գրինք

Դամուցանելի մեզ—դարձնել Դամուցանելի մեզ—դարձնել
Անսպառ լեռնեք յուրախու- մեզ

թեան—անվերջ ուրախ ե-
գեք

Չոր ասեմքս—որ մենք ասում Մեք ի մտի հղաք—մտքում
Անվերջ գրինք—անսխալ գրինք

Դամուցանելի մեզ—դարձնել Դամուցանելի մեզ—դարձնել
Անսպառ լեռնեք յուրախու- մեզ

թեան—անվերջ ուրախ ե-
գեք

Չոր ասեմքս—որ մենք ասում Մեք ի մտի հղաք—մտքում
Անսպառ լեռնեք յուրախու- գրինք

թեան—անվերջ ուրախ ե-
գեք

Այրենձի (այր և ձի) — հեծելա-
 զոր
 Գումարեցէք (գումարել) — ժոռ
 զովեցեք (ժողովել);
 Առաջի քան զիս — ինձնից առ
 ուղ

ՀՐԱՄԱՅՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԿԱԶՄՈՒԹՅԱԽՆԸ

Գրաբարում, ինչպես աշխարհաբարում, հրամայական եղանակն ունի միայն երկրորդ դեմք (եղակի և հոգնակի):

Հրամայական եղանակը գրաբարում նույնակես (ինչպես և աշխարհաբարում) երկու տեսակ է՝ զրական և արգելական կամ ժամական:

Հրամայականն ունի 2 տարբեր կազմություն՝ ներգործական և կրավորական վերջավորություններով: Բոլոր ներգործական տիպի բայերը, ինչպես և մի շաբք չեզաք տիպի բայեր, հրամայականում ունեն ներգործական վերջավորություն, իսկ կրավորական, ինչպես և մի շաբք չեզաք բայեր — կրավորական վերջավորություն:

Դրական հրամայականը գրաբարում ունի երեք ժամանակերպեր, ապանի առաջին և ապանի երկրորդ:

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՀՐԱՄԱՅՑԱԿԱՆ ա) եղակի (ներկա)

ա) Ներգործականի հրամայականը կազմելու ցորական առքիստի պարզ եւ ա խոնարհման բայերը ունեն էական բայերի պարզ ձեւ՝ եայ և այ (զբա-եայ, կարգ-այ) որոնց յան շեշտի աղդեցությամբ գուրս է ընկնում: Այսպիս:

պարզ

Հրամա

Ե խոնարհ—սիրեմ
 » » —ժողովեմ
 Ա. » —կարգամ
 » » —զնամ

սիրեայ=սիրեմ (սիրիր)
 ժողովեայ=ժողովեմ
 կարգայ=կարգամ
 զնաց=զնամ

բ) Պարզ ու խոնարհման և ածանցավոր և խոնարհման (տեսանուել) բայերի հրամայականը այդ բայերի պարզ առքիսի նիմֆ է՝ շեշտված: Այսպիս՝

Պարզ

Առըիստի
հիմքը

Հրամ.

Ու խոն.—թողում

թող

թող

» » —հեղում

հեղ

հեղ (թափիր)

Ածանց.

Ե խոն.—տեսանեմ

տես

տես

» » —արկանեմ

արկ

արկ

» » —իշանեմ

իշ

իշ (իջև)

բ) ՀԻԳՆԱԿԻ (ՆԵՐԿԱ)

Ե, ա, ու, խոնարհման պարզ բայերի և ան ածանցն ունեցող և խոնարհման բայերի հրամայականը կազմվում է այդ բայերի առըիստի հիմքին ավելանալով հոգնակի հրամայականի վերջավորությունը՝ էժ: Այսպես՝

Պարզ

Առը.

Հրամ.

Ե խոն.—սիրեմ

սիրեց

սիրեց-է՛ք

» » —ժողովեմ

ժողովեց

ժողովեց-է՛ք

» » —զրեմ

զրեց

զրեց-է՛ք

Ա. » —կարգամ

կարգաց

կարգաց-է՛ք

» » —գնամ

գնաց

գնաց-է՛ք

Ու » —թողում

թող

թող-է՛ք

» » —հեղում

հեղ

հեղ-է՛ք

(թափեց-է՛ք)

Ածանցավոր

Ե խոն.—տեսանեմ

տես

տես-է՛ք

» » —արկանեմ

արկ

արկ-է՛ք


» » —իշանեմ

իշ

իշ-է՛ք

թուրք պարի զմտաւ ածէք և անսպաս լեռուք յուրախութեան, բայց բան զայս կատարեցէք վազվազակի: Կամ առարէք բան առ բան նամակիս պատասխանի և կամ արիք ի Թուռնեկայք: Արդ զրանս զայսոսիկ վազվազակի կատարեա, գու, արքայ, զօր զումարեա և գունդ կազմեա, խաղա, զնա զու յաշաբան քուշանաց և զամենայն ազգս ժողովեա և անցուած գուշաբան գուշաբան:

Քըարարի դաս.—2



գուռն ի ներքս և զու անդէն արա քեզ բնակութիւնն Դուք
Քըրե զհրովարտակս զայս տեսանեք, անխափան վաղվաղակի
այրեծի զումարեցէք առաջի քան զիս:

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ¹⁾ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

ա) ԵԶԱԿԻ (ՆԵՐԿԱ.)

Կրավորական հրամայականի եզակին կազմվում է ի, ա, ու
խոնարհման բայերի առլիստից (ցայտական և պարզ) հիմքին
ավելանալով եզակի հրամայականի վերջավորությունը — իւր
կան բայեր, որոնց եզակի հրամայականը առլիստի հիմքն է՝
շեշտված: Այսպիս:

Պարզ	Առը.	Հրամ.
Ի խոն.—բնակ-իմ	բնակեաց	բնակեաց, բնակեց-իր (բնակվիր)
» » — խօս-իմ	խօս-եաց	խօսեաց
» » — դատ-իմ	դատ-եաց	դատեաց
» » — երե-իմ	երե-եաց	երեեաց, երեեցիր
Ա. » — աղ-ամ	աղ-աց	աղաց-իր
» » — փութ-ամ	փութ-աց	փութաց-իր
Ա. » — թող-ում	թող	թող-իր
» » — կիզ-ում	կիզ	կիզ-իր
Ածանցալ.		
Ի խոն.—տես-ան-իմ	տես	տես-իր
» » — ուս-ան-իմ	ուս	ուս-իր
» » — երկ-նչ-իմ	երկ	երկ-իր
Ա. » — դարմ-ան-ամ	դարմաց	դարմաց-իր
» » — մերձ-են-ամ	մերձ-եց	մերձեց-իր
» » — դոհ-ան-ամ	դոհ-աց	դոհաց-իր

1) Կրավորական ասելով այսուեղ պետք է հասկանալ ոչ թե սեռը, այլ
բայեր խոնարհման ձևը:

Աւ »	զարթ-նում	զարթ	զարթ-իր
» »	ջեռ-նում	ջեռ	ջեռ-իր
» »	այտ-նում	այտ	այտ-իր

բ) ՀՈԳՆԱԿԻ (ՆԵՐԿԱ)

Կրտվորական հրամայականի հոգնակին կազմվում է ե ի, առ ևս խոնարհման բայերի առըլստի բնից ավելանալով հոգնակի կը պակասական վերջավորությունները՝ ցոյական—եցայք կամ եցարուք՝ ացայք կամ ացարուք, պարզ՝ այք կամ արուք, եայք կամ երուք:

Պարզ	Առ.	Հրամ.
Ի խոն.—բնակիմ	բնակեաց	բնակեց-այք (բնակլեցեք)
» » — երկիմ	երկեաց	երկ-եցայք, երկ-
» » — խօս-իմ	խօսեաց	եցարուք խօս-եցայք, խօսե-
» » — դատ-իմ	դատեաց	դատեց-այք, դա-
		տեց-արուք
Ա. » աղամ	աղաց	աղաց աղաց-այք, աղաց-արուք
» » փութամ	փութաց	փութաց փութաց-այք, փութաց-արուք
Աւ » կիզում	կիզ	կիզ-երուք
» » թողում	թող	թող-այք, թող-ա-
		րուք

Ածանցավոր

Ի խոն.—տեսան-իմ	տես	տես-այք, տես-ա-
		րուք (տեսնվեցեք)
» » — ուսան-իմ	ուս	ուս-այք, ուս-ա-
		րուք
» » — երկ-նչ-իմ	երկ	երկ-ենայք, երկ-
		երնայք
Ա. » — զարմ-ան-ամ	զարմաց	զարմաց-այք,
		զարմաց-արուք
» » — մերձ-են-ամ	մերձեց	մերձեց-այք, մեր-
		ձեց-արուք

» »	— գոհանամ	գոհաց	գոհացայք. գոհացալուք
Ու »	— զարթ-նուում	զարթ	զարթ-եայք.
» »	— ջեռ-նուում	ջեռ	զարթ-երուք
» »	— այտ-նուում	այտ	այտ-եայք. այտ-երուք

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Պատճառական բայերի եղանակն ունի ո վերջավիրուսյունը, իսկ հոգնակին—էք,

Պատճառական բայերի հրամայականը կազմվում է այն օրենքով, որով կազմվում է ներդործական բայերի հրամայականը:

Եղանակի հրամայականը կազմվում է առիստի բնին ավելացնելով պատճառական հրամայականի ո վերջավորությունը:

Հոգնակի հրամայականը կազմվում է առիստի բնին ավելացնելով պատճառական հրամայականի վերջավորությունը ուց-էք:

Այսպես՝

նպ. իր.

հոգն. իր.

Բնակեց-ուցանեմ—բնակեց-ն,	բնակեց-ուցէ ք
Բազմաց-ուցանեմ—բազմաց-ն,	բազմաց-ուցէ ք
Ապրեց-ուցանեմ—ապրեց-ն,	ապրեց-ուցէ ք
Խաղաց-ուցանեմ—խաղաց-ն,	խաղաց-ուցէ ք
Իջ-ուցանեմ—իջ-ն,	իջ-ուցէ ք
Մատ-ուցանեմ—մատ-ն,	մատ-ուցէ ք
Կառուցանեմ—կառ-ն,	կառուցէ ք

Եթե բայի ոչ պատճառական ձևը ունի ցոյտկան առիստայդ դեպքում ոչ պատճառական բայից կազմված պատճառականի եղանակի հրամայականը կազմվում է ոչ պատճառականի առիստի բնից ավելացնելով ո:

Օրինակ՝

առիստ

պատճ. հրամ.

Բնակեցիլ

բնակեց

բնակեցն

Համալաւ
ապր-իլ

Հսաղաց
ապրեց

Խաղաց-ն
ապրեց-ն

Եթե պատճառականը կազմված է ածանցավոր բայերից,
ապա եղակի հրամայականը կազմվում է ածանցավոր բայի առ-
քիստի բնից (որը ցոյական չէ, այլ պարզ) ավելանալով ու
օրինակ՝

ածանց.

աստիս

պատճառ. երամ.

Քջ-անել
մատ-չ-իլ
կոր-նչ-իլ
կառ-նչ-իլ
ոստ-ն-ուլ

իջ
մատ
կոր
կառ
ոստ

իջ-ն
մատ-ն
կոր-ն
կառ-ն
ոստ-ն

Այս օրինաչափությունն ունի իր բացառությունները:

Կորն գնեղիչս մեր և հալածեա զթշնամիս մեր: Անցն յի-
նէն զբաժակս այս:

ԹԱԳԱԽՈՐԵՑՈՒՑԱՆԵԼ ԶՎԱՂԱՐՇԱԿ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՍ

Ի ժամանակին յայնմիկ թագաւորեցուցանէ զեղայր իւր
զաղարշակ մերոյ աշխարհիս, զիւակիսի և զարկմուտս տալով նմա-
սահմանս: Սա որպէս յառաջում մերում մատենին զրեցաք,
այր քաջ և խոնեմ՝ ընդարձակեաց ի վերայ սահմանաց իւրոց-
և կարգս կենցաղականս, որչափ մարթէր, սահմանեաց աշխար-
հիս և նախարարութիւնն, և նոցին նախարարութեանցն նահա-
պետութիւնն հաստատեաց զարս պիտանիս, որ ի զաւակաց նախ-
նոյն մեր հայկայ և յայլոց:

(ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ)

Որչափ մարթէր—որքան կարելի էր, նախարավոր էր

Բացառություններ

ԳՈՅՑԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՄԵԶ*)

Գրաբարում կան մի շարք բառեր, որոնք ընդհանուր գծե-

*) Բոդր զոյականներն ունեն հոլովման օրինաչափություն, այս տե-
սարակետից բացառությունն տերմինը պայմանական նշանակություն ունի:

բով նման են գոյականների հոլովման, սակայն ունեն իրենց առանձնահատկությունները։ Այդ բառերը բաժանվում են երկու խմբի։

ա) Բառեր, որոնց հոլովման մեջ տեղի է ունենաւմ հընչյունական փոփոխություն։ Օրինակ՝ Մամիկոննեան, սեռ, Մամիկոննեանք, Մամիկոննեից, աստուած, աստուծոյ կամ աստուածոյ, եթե աստուած բառը հեթանոսական իմաստով է զործածվում, հնչյունական փոփոխություն աեղի չե ունենաւմ (աստուած, աստուածոյ, աստուածով, աստուածովք, աստուածովք), իսկ եթե այդ բառը բրիտաննական իմաստ ունի, հոլովման ժամանակ հնչյունական փոփոխություն է կորում։ այսպիս՝ աստուած աստուածոյ, աստուածով յաստուածոյ, հոգնակի չունի Բառը թեք հոլովմանը կորցնում է ա ձայնավորը (աստուած=աստուածոյ)։

բ) Բառեր, որոնք հիմնականում ենթակա լինելով հոլովմանը նդհանուր օրինաչափության՝ որոշ հոլովմանը ունեն հոլովման տարբեր ձևեր։ Դրանք են, հայր, մայր, այր (և սրանցից բարդած բառերը), տէր, քոյր (քույր), կին, գեաւղ (գեւղ, գեւղ) աւը։

Հայր

Ուղիղ հայր	հարք	մայր	մարք
Ս. հաւը (հօր)	հարց (հարանց)	մաւը (մօր)	մարց
Տ. հաւը (»)	հարց (»)	մաւը (»)	զմարս
Հ. զհայր	զհարս	զմայր	Ե մարց
Բ. ի հաւըէ (ի հօրէ)	ի հարց (ի »)	ի մաւըէ (ի մօրէ)	
Գ. հարը (հարամք հարբք) (հարամբք)	մարը	մարբք (մարամբք)	
Ե. ի հաւը (հօր)	ի հարս	ի մաւը (մօր)	ի մարս

Այսպես են հոլովման եղրայր և նախահայր, նախամայր, վանահայր, հօրեղբայր և այլն բառերը։

Այր բառի նման է հոլովման տեր բառը, որ կազմված է ալ և այր բառերից։ Տի նշանակում է մեծ, որ նամապատասխանում է պես (րօբունի) բառին։ Տէր բառի մեջ երկրորդ բաղադրաբիշից այ միացությունը ենթարկվելով հնչյունափախության վարձել է (այր=էր, ինչպես հայր=հէր, մայր=մէր), իսկ առաջին բաղադրիչի (տի) ի ձայնավորը դուրս է ընկել և ստացվել է ա+էր=տէր։

ՏԵՐ

Ուղղ., աէր	տեարք (տերեր)
Ս. տեառն (տիբոջ)	տերանց
Տ. տեառն >	տերանց
Հ. զոէր	զտեարս
Բ. ի տեսառնէ	ի տերանց
Գ. տերամբ	տերամբք
Ն. ի տեառն	ի տեարս

ՔԱՅՐ

Ուղղ. քոյլը	քոյլք (քոյլք, քուերք) = քոյլքեր
Ս. քեռ (քոյլ, քուեր)	քերց (քուերց)
Հ. քեռ (քոյլ, քուեր)	քերց (քուերց)
Տ. քոյլը	քոյլս, քեռս
Բ. ի քեռնէ (քեռանէ)	ի քերց, ի քուերց
Ն. քեռը, (քերը, քուերը)	քեռքք (քերքք, քուերքք)
Ն. ի քեռ, ի քոյլը	ի քոյլս

Տէր բառի պիս հոլովկում են տանուտէր, պարտատէր: Տէր բառից բարդված տանուտէր բառը հոգնակիում ունի նաև տանուտիրաց, տանուտերաւք (օք) ձեւը, իսկ պարտատէր՝ պարտատիրի, պարտատիրաց:

Քոյլը բառի ձևով հոլովկում են բոլոր այն բառերը, որոնց մրկրորդ բաղադրիչն է քայր. հօրաքոյլը, մօրաքոյլը և այլն:

Կիճ

Տիկին

Ուղ. կին	կանայք	տիկինայք (տիկիններ)
Ս. կնոջ	կանանց	տիկնոջ
Տ. կնոջ	կանանց	տիկնոջ
Հ. կին	կանայս	տիկին
Բ. ի կնոջէ	ի կանանց	ի տիկնոջէ ի տիկնանց
Գ. կնաւ, կանամբ	կանամբք	տիկնաւ, (տիկնամբ) տիկնամբք
Ն. ի կին	ի կանայս	ի տիկին ի տիկինայք

Գեաւդ, գեւդ, գեդ, գիւդ

(ի հոլովկում)

Ուղ. գեաւդ, գեւդ, գեդ, գիւդ	գեաւդք, գեւդք (գյուղեր)
Ս. գեաւդջ, գեւդջ, գեդջ (գյուղի)	գեաւդից, գեւդից (գյուղիրի)
Տ. գեաւդջ, գեւդջ, գեդջ	գեաւդից, գեւդից
Հ. զգեաւդ, զեւդ	զգեաւդս, զգեւդս
Բ. ի գեդջէ	ի գեաւդից, ի գեւդից

Դ. գիւղիւ
Ն. ի գեաւզ, ի գեղջ

գիւղիւք
ի գեաւզ, ի գիւղու

Աւը (ՕՐ)
(ու հոլովում-ներք թեք.)

Ուղղ. աւը (օր)	աւուըք (օրեր)
Ս. աւուը (օրվա)	աւուըց (օրերի)
Տ. աւուը	աւուըց
Հ. գաւը (զօր)	(զ) աւուըս
Բ. յաւըէ (յօրէ)	յաւուըց
Գ. աւուըր	աւուըրք
Ն. յաւուը	յաւուըս (օրերում)

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Արք գեղջն հետամուտ եղին մեզ: Առն միոջ էին երկու արդիք: Առաքեցին գքորս իւրեանց ի գեաւզս իւրեանց: Դու ուստի՞ զիտես զայզպիսի բան խօսել զնօրէ: Ծառայ երկնչի ի տեհաննէ: Պատանեակն լուալ զգեղիցկութենէ կնոջն և յանձնայր հասանել նմա: Յուշ լիցի քեզ պայման ուխտի հօրն քո: Առն էր Մամիկ անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ: Հնարս խնդրէր կնոջն կորստեան: Փոքը յեղրարս իմ ևս էի, կրտսեր ի ատն հօր իմոյ, Յաւուըս սորա կայր պատանի մի յազգէն Անձեացեաց: Ետուք դմա զաէրութիւնն Միւնեաց, լուշ՝ քյազգականաց գորա, զինչ պատմեն զգմանէ: Եւ մինչ գեռ այս ամենայն ամբաստանութիւն զնմանէ կուտէր բազում աւուըս, յառաջ մատեսն և իւր ազգականքն. և եկն եհարց զողջունէ եղրաց իւրոց:

Հետամուտ եղին—հետամուտ եւ
եղան
Առն միոջ էին—մի մարդ ուներ
(բառացի՝ մի մարդու կային)
Ուստի—մրտեղից
զՏեաննէ—տիրոջ մասին (գ
նախդրով բացառական)
Զնօրէ—հոր մասին
Հասանել նմա—նրան հասանել

Լուաւ—լսեց
Յուշ լիցի քեզ—հիշեր
Պայման ուխտի—պայմանն ու
գաշինքը
Առն էր Մամիկ անուն—այն
մարդու անունը Մամիկ էր
Խնդրել—ուզել, որսնել
Յաւուըս սորա—սրա ժաման
նակ, սրա օրերում

Ֆառւք գմա—զբան տվիք
Զդմանէ—զբա մասին
Ամբաստանութիւն— մեղաւ
Կուտել—ժողովել, հավաքել

Յառաջ մատեան—մոտեցան
Եհարց—հարցըեց (հարցանել
բայի անց, կատ. ժամա—նակը)

Դաս Ժ.9

Արդ զի՞ կոծիս, զի՞ մրցիս, զի՞ ոչ շիջանիս. զի՞ կոչես
Ի խորհուրդ զայնոսիկ որոց զոգիսն ձեր ի ձէնջ քաղեալ՝ հա-
նեալ է զանապականդ յազականութիւն և զապականելի մար-
մինդ գէշաքարը արարեալ իրրե զագիր մեսելոտի ի բաց ընկեց-
եալ Ապաքէն զայդ կամիս, զի ծածկեսցի խորհուրդն ամբարըշ-
տութեան, տեսջիր յորժամ յայտնեսցի, ապա դիտասցես զիւ
կատարածի դորա (Եղիշէ):

Զի՞—ինչո՞ւ
Կոծիս (կոծիւ) — ծեծկվում ես,
ալեկոծվում ես
Մրցիս (մրցիւ) — կովում ես
Ոչ շիջանիս—չես հանգչում
Զի՞ կոչես ի խորհուրդ—ինչո՞ւ
խորհրդի ես կանչում
Այնուկ—նրանց
Որոց զոգիսն ձեր ի ձէնջ քա-
ղեալ—որոնք ձեր հոգիները
ձեզնից հանել են (կամ հանե-
լով)

Հանեալ է—ձեւ է
Զանապականդ յազականու-
թիւն—այդ անարատը (անմահը)
Զապականելի մարմինդ—այդ
ապականացու մարմինը (կամ
քու ապականացու մարմինը)

Իրրե զագիր մեսելոտի—ինչ-
պես զզկելի մեսել
Ի բաց ընկեցեալ—դեն է ձզել
Ապաքէն—անշուշտ
Զայդ կամիս—այդ ես կամե-
նում
Զի ծածկեսցի—որպեսզի ծածկ-
վի
Խորհուրդն ամբարըշտեան—
Հար միտքը
Տեսջիր, յորժամ յայտնեսցի—
կտեսնես, երբ կհայտնվի, կե-
րեվա
Ապա դիտասցես—հետո կիմա-
նաս
Զեւ—ելքը
Զեւ կատարածի դորա—զբա

ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ
Ո՞, մվ, զբ, զինչ, մը

Եզակի

Հոգեակի

Ուղղ. մ, մվ (մվ)

մյք (մվքեր)

Ս. մւմ (մւմ)

մյց (որմնց)

Տ. զմ, զմվ (մւմ)

մյց (»)

Բ. յումէ՞ (ումբց)

յոյց (որոնցից)

Գ. որմվ (ումմվ)

որմվք (որոնցնվ)

Ե. յժ, յժվ

Եզակի

Ուղղ. զինչ, զբ (ինչ)

Ս. է՞ր

ինչնւ

Տ. իմ, հիմ, էրմամ

(ինչու)

Հոգեակի չունի՞

Չ. զինչ, զբ

(ինչ)

Բ. իմէ՞, առ իմէ՞

(ինչից)

Գ. իւ

(ինչնվ)

Ե.

Ո՞ ով՞ գերանունը գործիականում չունի իրենից կտզմված ձև. գործ է ածվում որ հարաբերական զերանվան գործիականը որոնվի. Որ գերանունը երբեմն գործ է ածվում նաև հոգեակիում մյուս հոլովների համար. մյք, որնց (փոխ, մյք, մյց):

Զի՞, զինչ, է՞ր, հիմ, էրմամ, առ իմէ՞, առ ինչ հարցականների փոխարեն գործածական են նաև ընթ է՞ր, վասն է՞ր, զիմլոդ-է՞ր աղապաւ, որոնք նշանակում են ինչ, ինչնւ համար, ինչից, ինչպես:

Յա, յավ մ, մվ-ի ներգ. ձևերը գործ են ածվում սովորաբար որպես մակրայ և ցույց են տալիս գործողության մը կողմուղղված լինելը. Օր. յա երթաս (=մւր ես զնում), յերեսաց քոց են յա փախեացց (=քո երեսից ես մւր փախչեմ):

Ո ով

Եզակի

Ուղղ. ո ոք (ով որ)

ոյք ոմանք

Ս. ոյք ուրուք

ոյց ոմանց

Տ. ում ումեք
 Հ. զո ոք
 Բ. յումէ ումեքէ
 Գ.
 Ե.

Այց ոմանց
 զոյս ոմանս
 յոյց ոմանս

Ո ոք հարագիրը թարգմանվում է ով որ Օրինակ՝ ո ոք
 Եթայր առ նստա—ով որ զնում էր նրանց մոտ

ՀԱՏՈՒԱԾ Ի ՀՈՄԵՐԱՅ.

ՊՐԻՍՄՈՍ

«Եսկ ով ես զու, ո սիրելի», ծերն կրկնեալ հիանայր,
 «Յոյց ծնողաց, զի զհեդ որդւոյս այգպէս շքով խօսեցար
 թէ արդարե զինուոր ես զու Աքիլեայ,
 Աղէ, արդ զու, ո բարեկամ, զձշմարիտն ինձ ասաւ
 Կա իմ որդեակն տակաւին նաւուորմին ի հանդէս,
 Եթէ յօշեալ զնա իւր շանց արկ կերակուր Աքիլեա».

ՀԵՐՄԵՍ

Զնա, ով ծեր, ոչ շունք, ոչ հաւը յօշեցին,
 Այլ նաւուն կայ Աքիլեայ, անկեալ անշուք ի վրանին
 երկուսասան այդ ծագեցաւ, մարմին զորա ոչ նեխի,
 Չուտեն որդունքն, ոյց կուր մարմինքն են անկելոցն
 մարտին

Կրկնեալ	հիանայր—	կրկնելով	իւր շանց—իր շներին
		հիանում	Երկ կերակուր—ձզեց որպէս
Յոյց ծնողաց—	որ ծնողներից		կերակուր
Զի—որ			Այլ առ նաւուն կայ Աքիլ-
Զհեդ որդւոյս այգպէս խոսեա- ցար—թշվառ որդւում մասին			ւայ—այլ կա (զտնվում է)
Աղէ—օն (ձայնարկություն է)			Աքիլեսի նավի մոտ
Ո՛ բարեկամ—ով բարեկամ			Անկեալ ի վրանին—ընկած
Հանդէս—բազմութիւն, տեսարան			վրանում
Եթէ յօշեալ—թե հոշոտելով			Երկուսասան—տասներկու
			Այդ ծագեցաւ—առավոտ ծա- կեց

Ոչ նեխի — չի փառում
 Չուտեն որդունքն — որդերը
 չեն ուսում
 Ոյց կուր են — որոնց (համար)
 կերակուր են

Մարմինքն անկելոցն ի մար-
 տի — մարտում ընկածների
 մարմինները

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ
 Ոմն, ոք, իմն, ինչ, իք, այլ, միւս

ա) Ոմն

Ուղղ. ոմն (ոմն, մեկը)	ոմանք (ոմանք)
Ս. ուրումն, ուրեմն	ոմանց (ոմանց)
Տ. ումեմն	ոմանց
Հ. զոմն	զոմանս
Բ. յումեմնէ	յոմանց
Գ. ոմամբ	ոմամբք
Ն. յումեմն	յոմանս

բ) Ոք

Ուղղ. ոք	չոգնակի չունի. փո-
Ս. ուրուք	խարենը գործէ ած-
Տ. ումեք	վում ոմն բառի հոգ-
Հ. զոք	նակեն:
Բ. յումեքէ	
Գ. (ոմամբ)	
Ն. յումեք	

Յանոր. ոք գերանունը չունի գործիական. գործածական
 ոմն գերանվան գործիականը:
 Ոմն, ոք գերանունները գրվում են նախախագան և հետագան և
 համաձայնում են այն անվան հետ, որի հետ գործ են ածվում:
Օրինակ՝

Հետադաս

Ուղղ. այր ոմն (մի մարդ)	արք ոմանք
Ս. առն ուրումն (մի մարդու)	արանց ոմանց
Տ. առն ումեմն	արանց ոմանց
Հ. զայր ոմն	զարս ոմանս
Բ. յառնէ ումեմնէ (մի մարդուց)	յարանց ոմանց
Գ. արամբ ոմամբ	արամբք ոմամբք
Ն. յառն ումեմն (մի մարդու մեջ)	յարս ոմանս

գ) իմն, դ) իֆ, ե) ինչ

Ուզգ. իմն	իք	ինչ		
Ա. իրեմն	իրիք	իրիք	հոգնակի	չունի
Տ. իմեմն	իմիք	իմիք		
Հ. իմն	—	ինչ		
Բ. յիմեմնէ	յիմեքէ	յիմեքէ		
Գ. իւ	իւիք	իւիք		
Ն. յիմեմն, յիմն	յիմիք	յիմիք		

Իմն ինչ նշանակում է մի բան, որիէ, մի որիէ:

Իմն, ինչ զբվում են գոյականից հետո և համաձայնեցնում
են թվով և հոլովով: Օրինակ՝

Ուզգ. ջուր ինչ	Ինչ գերանունը գոյականի իմաստ էլ ունի:
Ա. ջրոյ իրիք	Այս զեպքում հոլովում է ի հոլովումով
Տ. ջրոյ իմիք	(ինչ, ընչի, յընչէ, ընչիւ, ինչք, ընչից,
Հ. ջուր ինչ	զինչս, յընչից, ընչիւք, լինչս):
Բ. ի ջրոյ իմեքէ	
Գ. ջրով իւիք	
Ն. ի ջուր իմիք	

Ինչ գերանունը գործ է ածվում զինչ գերանվան հետ,
զբվելով վերջաղաս՝ զի՞նչ ինչ և ինչ նշանակում է ինչ բան, որ
բանը, հոլովում է այսպիս:

Ուզգ. զինչ ինչ—(զինչ ինչ խոռվեն զհողիս նոցա=ինչ է հու-
զում նրանց հոգին)

Ա. է՞ր իրիք—(է՞ր իրիք են դաշտորայս=ինչ դաշտեր են սրանք)

Տ. իմ (հիմ) իմիք—(իմ իմիք արժանի լինիցիմ=ինչի ար-
ժանի պիտի լինեմ)

Հ. զինչ ինչ—(զինչ ինչ կամիս առնել=ինչ ես ուզում անել)

Բ. յիմէ՞ իմեքէ—(յիմէ՞ իմեքէ հայենմք զթություն=ինչից
ենք զթություն ինզգում)

Գ. իւ իւիք—(իւ իւիք պակասիցիս=ինչով եմ պակաս) և
այլն:

Ինչ գերանունը գործ է ածվում ոչ մասնիկի հետ և զբվե-
լով վերջում կազմում է ոչինչ բացասական գերանունը, որը
տարբեր իմաստ ունի ոչինչ գոյականից և զբվում է առանձին
(ոչ ինչ): Ոչինչ գերանունը հոլովում է այսպիս:

Ուզգ. ոչ ինչ (ոչինչ) Ինչ բառը թարգմանվում է նաև բնավ:

անուանի և յաղբողս ընդ այլ աշխարհակալս։ Վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ և փառաւորեալք, իրքի հիշտացուցիչք (զվարճացնողներ) և կամակատարք։ Որպէս ճարպոյ ժնչ հեղման հայեցողացն երեցուցանէ կարծիս։

ԱՆՑՑԱԼ ԴԵՐԲԱՅ

Գրաբարում անցյալ գերբայը իր ծագումով նույնն է, ինչ որ անորոշ գերբայը։

Անցյալ գերբայն ունի եալ վերջավորությունը, տեսւեար պնաց-եալ զարմաց-եալ, զր-եալ (տեսած կամ տեսել, գնացած կամ գնացել զրած կամ զրել)։

Եալ վերջավորությունը եամ (եմ) էական բայի հիմքն է (եա) ավելացած լ (եա+լ=եալ)։

Անցյալ գերբայը կազմվում է բայերի (ներգործ., կրտվոր. և չեղոք) ցոյական և պարզ առօրիսաի բնի հետ (եաց. աց, ոյց) միանալով եալ վերջավորությունը՝ Այսպես՝

Անորոշ գերբայ

Առիստի բունը

Անցյալ դերբայ

Ա. Խոնարհ.

Պարզ—գնամալ

գնաց

գնաց-եալ (գնացել, գնաց ցած)

գող-ալ
հող-ալ

գողաց
հողաց

գողաց-եալ
հողաց-եալ

Ա(ի) Խոնարհ.

աիրել

սիրեց

սիրեց-եալ

կոչ-եալ

կոչ-եաց

կոչ-եաց-եալ

խօս-իլ

խօս-եաց

խօս-եաց-եալ

ՅԻ Խոնարհ.

հեղ-ուլ

հեղ-

հեղ-եալ

թող-ուլ

թող-

թող-եալ

զեն-ուլ

զեն-

զեն-եալ

զարմ-ան-ալ

զարմաց

զարմաց-եալ

Ածանցավոր

յդ~ան~ոլ	յդաց	յդաց~եալ
մերձ~են~ոլ	մերձեց	մերձեց~եալ
արկ~ան~ել	արկ	արկ~եալ
օծ~ան~ել	օծ	օծ~եալ
մեռ~ան~իլ	մեռ	մեռ~եալ

Զ, նչ, ն, ածանցն ունեցող բայերից անցյալ գերբայ կազմելու համար պիտք է կազմել այդ բայերի ցոյշական առիթսությոց մասնիկով և ապա ավելացնել գերբայական եալ վերջավագը բարձրունքը: Այս գերբում շեշտի տեղափոխության հետեւանքով այցը դառնում է ուց: Այսպես՝

Անորոշ դեր:

առիթսու.

Անց. դերդ:

թու~չ~իլ	թու~ոյց	թու~ուց~եալ
փախ~չ~իլ	փախ~ոյց	փախ~ուց~եալ
զարթ~ն~ուլ	զարթ~ոյց	զարթ~ուց~եալ
ցաւ~ն~ուլ	ցաւ~ոյց	ցաւ~ուց~եալ
ջեռ~ն~ուլ	ջեռ~ոյց	ջեռ~ուց~եալ

Գրաբարում գործածական են նաև մի շաբթ բայերի անոնց գերբայի հետեւյալ ձևերը՝ թու~եալ, փախեալ, ջեռեալ, քաղցածալ և այլն:

Կրավորական բայերը չունեն հատուկ գերբայական (անց.) վերջավորություն, այլ կազմվում են այնպես, ինչպես ներդորածական, պատճառական սեռի բայերը:

Անցյալ գերբայն տեսարհաբարում թարգմանվում է մի քանի ձևով՝ զարմացեալ=զարմացած, զարմացել, զարմանալով:

Անցյալ գերբայը հոլովում է ո հոլովումով (եղակի և հոգածակի), Այսպես՝

Եղակի թ.

Ուզգ. տեսեալ	սիրեցեալ
Ս. տեսելոյ	սիրեցելոյ
Տ. տեսելոյ	սիրեցելոյ
Հ. (դ) տեսեալ	զսիրեցեալ
Ք. ք տեսելոյ	ի սիրեցելոյ

Զքեղ կալցին քաջք, տարցին
Յազատ ի վեր ի Մասիս.
Անդ կացցես և զլոյս մի տեսցես:

Հալածել զեզրարս իւր և գքորս—
իր եղբայրներին և քույրեն
րին հալածելը—
Հանդերձ այլարանելով— այլա-
ռանությամբ հանդերձ
Յետ Սրտաշխիք— Սրտաշխից
հետո
Զի մի բնակեսցեն յԱյրարատ—
ի կալուածս արքայի որ-
պեսվի չբնակին Այրարա-
տում, արքայի (թագավորի)
կարլածում
Զի որդի ոչ գոյր նորա—որով-
հետեւ նա որդի չուներ:
Որ յետ սակաւ ինչ աւուրց
թագաւորելոյն իւրոյ— նա քիչ
օրեր թագավորելուց հետո
Անցեալ զկամրջաւն Սրտաշատ
քաղաքի— անցնելով Սրտաշատ
քաղաքի կամրջով
Որսալ կինճո և իշավայրիս զա-
կամրք Գրինայ— որսալու կին-
ճեր և վայրենի էշեր Գինա
(գետի)ակունքների մոտ
Անկանի ի խոր իմն մեծ— ընկ-
նում է մի մեծ փոսի մեջ
Աղմկեալ իմն ի ցնորից— շփոթ-
վելով ինչ որ ցնորքից
Խելագարանայ— խելագարվում է
Բնդ վայր յածելովիներիվարաւն—
ձիուց վայր ընկնելով

Խորասոյդ էալ— խորասուզվին
լով
Անհետի (անհետել)— անհե-
տանոմ է
Զամանէ (զ նախզրով բա-
ցառ. սրա մասին)
Երդիչքն Գողթան— Գողթնի
հրդիչները
Ըստ օրինի հեթանոսաց—
հեթանոսների (հեթանոսա-
կան) սովորության համաձայն
Դժուարի (դժուարիլ)— նե-
ղանում է, վշտանում է
Ասելով ցհայրն— ասելով հորը
Մինչ զու զնացեր հրբ զու
զնացեր
Վասն որոյ— ուստի
Անիծեալ զնա Սրտաշխիք—
Սրտաշխը նրան անիծելով
Եթե զու յորս հեծցիս— թե
որ զու հեծնես, որսի զնաս
Յազատն ի վեր ի Մասիս— դե-
ղեղի աղատն ի վեր Մա-
սիս
Զքեղ կալցին քաջք— թող
քաջքերը քեզ բանեն
Տարցեն— տանեն
Անդ կացցես— այնտեղ մնան
Զլոյս մի տեսցես— լույս
չտեսնես

ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Բայերն ըստ կազմության լինում են երկու տեսակ: Կանը բայեր, որոնց մեջ էական բայն անմիջապես միանում է բայն արմատին: Գրեւ, խաղաղ, թողուր Այս անորոշ դերբայական ձեռքի մեջ եւ աւ ուլ էական բայերն անմիջականորեն ավելանում են զր, խաղ, քող արմատներին: Այսպիսի բայերը կոչվում են պարզ:

Կան բայեր, որոնց էական բայն անմիջապես չի միանում բայարմատին, այլ էական բայի և բայարմատի միջև կա մասնիկ՝ ածանց. փախ-չիւ մերձ-են-աւ զարթ-ն-ուր: Այս դերբայական ձեռքի մեջ իլ, ալ, ուլ էական բայերն անմիջականորեն չեն ավելանում փախ, մերձ, զարը արմատներին, այլ դրանց միջեվ կան մասնիկներ՝ չ, են, ն, որոնք դերբային առանձին իւմաստ չեն տալիս. չ, են, ն մասնիկները քերականության մեջ կոչվում են միջածանցներ, իսկ բայերը՝ ածանցավոր:

Գրաբարում միջածանցներ են՝ ան, են, ն, անչ, աչ, նչ, չ. տն=զարմ-ան-աւ տես-ան-եւ իջ-ան-եւ ուս-ան-իւ մեռ-իւ և այլն.

են=մերձ-են-աւ, արբ-են-աւ, ընկ-են-ուր, զգ-են-ուր (հաղ-նեւ) և այլն.

ն=զարթ-ն-ուր, առ-ն-ուր, երդ-ն-ուր, զրօս-ն-ուր և այլն՝
անչ=մեղ-անչ-եւ.

աչ=ճան-աչ-եւ.

չ=մարտ-նչ-իւ երկ-նչ-իւ կոր-նչ-իւ և այլն.

չ=փախ-չ-իւ թռչ-իւ հանգ-չ-իւ և այլն:

Ածանցավոր բայերի առբիստը պարզ է, բացառությամբ ան-ամ, են-ամ բայերի, որոնց առբիստը ցոյշական է: Օրինակ՝ պարզ=մեռ-ան-իւ=մեռ, փախ-չ-իւ=փախ, մեղ-անչ-եւ=մեղ-ցոյշական=զարմ-ան-աւ=զարմ-աց, յագ-են-ալ=յագեց և այլն:

Ածանցավոր բայերը առբիստում և նրանից կազմված ձերբում սովորաբար ունեն կրավօրականի վերջավորությունն բացառություն են կազմում ան-եմ կազմությունն ունեցող բայերը (տես-ան-եմ, մուծան-եմ, ել-ան-եմ և այլն):

Օրինակ՝ մեռ-այ, մեռ-այց, մեռ-իր, մարտ-եայ, մարտ-եայց, մարտ-իր (հ.թ.), սակայն տես-ի, տես-ից, տես-ցես, տես (հրամ.) և այլն:

ԽՈՆԱՐՀԱԽՄ

Վ(ի)

Ա.

Ու

Սահմանական եղանակ

Ներկայ ժամ:

Եզակի քիւ

տեսանկմ	մարտնչիմ	զարմանամ	զարթնում
տեսանես	մարտնչիս	զարմանաս	զարթնուս
տեսանէ	մարտնչի	զարմանայ	զարթնում

Յոգնակի քիւ

տեսանեմք	մարտնչիմք	զարմանամք	զարթնումք
տեսանէք	մարտնչիք	զարմանայք	զարթնուք
տեսանեն	մարտնչին	զարմանան	զարթնում

Անցեալ անկատար

Եզակի քիւ

տեսանէի	մարտնչէի (կովում էի)	զարմանայի	զարթնուի (ոյի)
տեսանէիք	մարտնչէիք (» էիք)	զարմանայիք	զարթնուիք (ոյիք)
տեսանէր	մարտնչէր (» էր)	զարմանայիր	զարթնուիր (ոյիր)

Յօգնակի քիւ

տեսանէաք	մարտնչէաք (կովում էինք)	զարմանայաք	զարթնուաք (ոյաք)
տեսանէիք	մարտնչէիք (» էիք)	զարմանայիք	զարթնուիք (ոյիք)
տեսանէին	մարտնչէին (» էին)	զարմանային	զարթնուին (ոյին)

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի (առաջին)

Սգակի քիւ

անհուան-իցեմ	մարտ-նչ-իցիմ (կովեմ, կկովեմ)	զարթ-ն-ուցում
անհուան-իցես	մարտ-նչ-իցիս	զարթ-ն-ուցուս
անհուան-իցէ	մարտ-նչ-իցի	զարթ-ն-ուցու
	զարմ-ան-այցեմ	զարթ-ն-ուցում
	զարմ-ան-այցես	զարթ-ն-ուցուս
	զարմ-ան-այցէ	զարթ-ն-ուցու

Յոզնակի քիւ

անհուան-իցեմք	մարտ-նչ-իցիմք (կովենք, կկովենք)	զարթ-ն-ուցումք
անհուան-իցէք	մարտ-նչ-իցիք	զարթ-ն-ուցուք
անհուան-իցին	մարտ-նչ-իցին	զարթ-ն-ուցուն
	զարմ-ան-այցեմք	զարթ-ն-ուցումք
	զարմ-ան-այցէք	զարթ-ն-ուցուք
	զարմ-ան-այցին	զարթ-ն-ուցուն

Առիստի բունք

Ալարդ

անհուան	մարտ	զարմաց~*)	զարթ
---------	------	-----------	------

ԱՆՑԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼ

(առըիստ)

Սգակի քիւ

անհուան (անհուան)	մարտ-եայ (կովեցի)
-------------------	-------------------

*) զարժ-ան-ալ բայի էական բայը դուրս է ընկնում, իսկ ան առնացի և հայոցը փախարինվելով ց-ով սաացվում է զարժաց ձեւ: Նույն հպանակազ փոխվում է նաև են ածանցը զառնալով ից: Օքինակ՝ զգ-են-ու-զգ-եց (առը. բան), մերձ-են-ալ - մերձ-եց և այլն, պանց վրա ավել-քանում են կրավորականի վերջավորությունները:

տես-եր (*տեսաբ*) **մարտ-եաբ**
տես—տեսավ **մարտ-եաւ**
(*եանս*)

զարմաց-այ **դարթ-եայ** (*արթնացա*)
զարմաց-ար **դարթ-եար**
զարմաց-աւ **դարթ-եաւ**.

Յոգնակի քիւ

տես-աք (*տեսանք*) **մարտ-եաք**
տես-իք (*էք*) (*տեսաք*) **մարտ-եայք**
տես-ին (*տեսան*) **մարտ-եան**

զարմաց-աք **դարթ-եաք**
զարմաց-այք **դարթ-եայք**
զարմաց-ան **դարթ-եան**

Մանոք. **մարտ-եայ**, **մարտ-եար**, **եաւ** և **այն** ձեզերի մեջ
և ձայնավորն առաջացել է անորոշ դերայի (*մարտնչել*) ի
ձայնավորի և այ, ար, աւ և այն վերջավորությունների մթա-
ցությունից, որտեղ ի և ա միանալով դառնում է եաւ Օցինակէ՝
մարտ-ի+այ=մարտ-եայ և այն, նույն և զարթնուէ բայի
մեջ, որը զարթ-չիւ բայն է. սրանից՝ **զարթ-ի+յ=զարթ-**
եայ,

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապանի (*երկրորդ կամ պարզ*)

Եզակի

տես-ից (*պիտի տեսնեմ*) **մարտ-եայց**
տես-ցիս **մարտ-իցես**
տես-ցէ **մարտ-իցէ**

զարմաց-այց **դարթ-եայց**
զարմաս-ցիս **դարթ-իցես**
զարմաս-ցէ **դարթ-իցէ**

Յոզեակի

անս-ցուք	մարտ-իցուք	զարմաս-ցուք	զարթ-իցուք
տես-ջիք	մարտ-իջիք	զարմաս-ջիք	զարթ-իջիք
տես-ցին	մարտ-իցին	զարմաս-ցին	զարթ-իցին

ՀՐԱՄԱՅՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ
Ներկայ

Եղ.—տնս	մարտ-իր	զարմաց-իր	զարթ-իր
Յոդ.—տես-էք	մարտ-երնուք	զարմաց-արնուք	զարթ-երնուք

ՅԱՂԱԳՍ ԹԱԴԱՒՈՐԵԼՈՅՆ ՎԱՂԱՐՇԱՅ ԵՒ ՇԻՆԵԼՈՅ ԶԱԽԱՆՆ
ՔԱՍԵՆՈՅ, ԵՒ ՊԱՏԵԼ ՊԱՐՍՈՎԱԻ ԶՆՈՐ ՔԱՂԱՔ, ԵՒ ՊԱ-
ՏԵՐԱԶՄ ԸՆԴ ԽԱԶՐԱՑ ԵՒ ՄԱՅ ՆՈՐԻՆ

Յետ մահուանն Տիգրանայ թազաւորէ վաղարշ որդի նոռ-
քին երեսուն և երկու ամի հոմանուանն իւրոյ վաղարշայ Պար-
սից արքային Սա շինէ աւան մեծ զտեղի ծննդեան իւրոյ ի վե-
ցայ ճանապարհին. ուր ի գնալն մօր իւրոյ ի ձմերոց յԱյրա-
քատ, յանկարծակի պատահեալ երկանց ի գնացան ծնաւ ի վերաց
ճանապարհին, ի գաւառին Բասեան, ի տեղուջ՝ ուր խառնին
Մուրց և երասին. զոր շինեաց յիւր անուն, և կոչեաց Վաղարշ-
շաւանն Սա պատեաց պարսպաւ և զնզօր աւանն Վարդգէսի, ուր
ի վերայ Քասախ զեառյ. զարմէ յառասպելն ասեն.

Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն
Ի Տուհաց գաւառէն, զթասադ գետով,
Եկեալ նստեալ զնըէլ բլրով.
ԶԱՐԱՄԻՄԷԴ քաղաքու, զթասադ գետով
Գոնել կոփել զդուանն երուանդայ արքայի:

Յաղագս թազաւորելոյն վաղարշ-	Մահ նորին—նրա մահը
շայ—վաղարշի թազաւորելու	Յետ մահուանն (հետ մահ- մասին)
մասին	վանն) Տիգրանայ—Տիգրանի-
Յաղագս շինելոյ զտանն Բասե-	մահից հետո
նոյ—Բասենի ավանը շինելու	Յերեսուներորդի և երկրորդի մասին
մասին	ամի—երեսուն երկուերորդ տարում

Հոմանուանն (հոմանվանն) իւր
 ըոյ Վաղարշայ Պարսից ար-
 քայի—իր համանուն Պարսից
 Վաղարշ թագավորի։
Թգնալն մօր իւրոյ ի ձմերոց յԱյ-
 քարտա—երը իր մայրը
 Այրարտա էր գնում
Յանկարծակի պատեալ երկանց ի
 զնացսն—յանկարծ զնալու ժա-
 մանակ երկունքը բունեց
Ի տեղւոշ, ուր խառնին Մուրց
 և երասի—այնտեղ, որտեղ
 խառնվում են Մուրցը և Ե-
 րասիը
Զոր շենհաց յիւր անուն—որը
 կառուցեց իր անունով
Զորմէ յառասպելն ասեն—որի

մասին առասպելի մեջ առում
 են
Հատուած (հատված) զնա-
 ցեալ—դատվելով (գաղթա-
 կան) զնաց
Եկեալ նստեալ—եկավ, նստեց
 զԵրէ Բլրով—Եբէշ բլրէ
 մոտ
 Զարտիմէդ քաղաքաւ—Արտի-
 մէդ քաղաքի մոտ
Զքասազ զետով—Քասազ զե-
 տի մոտ
Կոփել կոփել զդուռն երաւանդաց
 արքայի—զարնելու երվանդ
 արքայի գուրը
Կոփել—զարնել, տաշել

ՅՈՒՅՍԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԽՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄՆ

Առյն, դոյն, նոյն

(Ի հոլովում)

Եզակի

Ուղղ, սոյն (սույն)	դոյն
Ս, սորին (սույնի)	դորին
Տ, սմին	դմին
Հ, զսոյն	զդոյն
Բ, ի սմին (սույնից)	ի դմին
Գ, սովին, սովիմբ (սույնով)	դովին, դովիմբ
Ն, ի սմին (սույնի մեջ)	ի դմին

Ցողնակի

Ուղղ, սոքին	դոքին
Ս, սոցին, սոցունց	դոցին, դոցունց

Տ. սոցին, սոցունց	դոցին, դոցունց
Հ. զոսին	դոսին
Բ. ի սոցին, ի սոցունց	ի դոցին, ի դոցունց
Գ. սովիմբք, սոքիմբք, սո-	դովիմբք, դո-
քումբք	քեմբք, դոքումբք
Ն. ի սոսին	ի դոսին

Նույն ձևով հոլովվում է նոյն (նույն) գերանունը:

Այսին, դոյն, նոյն զերանունները զբարարում գործ են ած-վում երկու նշանակությամբ, ինչպես այս, այդ, այն զերա-նունները, գրյականարար և ածականարար:

Եթե գործ են ածվում մենակ, առանց զրվելու ուրիշ ան-վան վրա, գոյականի նշանակություն ունեն, այս գերանունները:

Եթե գործ են ածվում զրվելով ուրիշ անվան վրա, ստա-նում են ածականի նշանակություն. Այս գերգում թվով և հո-լովով համաձանում են այն անվան հետ, որի վրա զրվում են օրի-նօք ժամանչեր ընդ այնոսիկ, որք ոչ ընդ նովին օրի-նօք ժամանէին (կազում էր նրանց հետ, որոնք նույն օրենքին չեն ենթարկվում):

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն ԴԵՐԱ-ՆՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁԸ

Յետ այնօրիկ եղի շարժութի մեծ յոյժ: Եւ ժողովեցան ի նոյն տեղի արք բազումք: Հաճոյ թուեցաւ խորհուրդն թա-դաւորին և մեծամեծացն, որ էին ի նմին բանի: Ըստ այս պատճենի հրովարտակ ենաւ յաշխարհն Հայոց, ի Վրաց և յԱ-ղուանից: Յետ երկոտասան աւուր հրաման տայր նմա ընթրիւ-գործել (=ընթրիք պատրաստել) առատութեամբ: Եւ դառնայլ անդրէն ի քաղաքն իւր նովին պատրաստութեամբ: Այսուհիկ առ-մենիքան երթային առ նա և խնդրէին հաց ի նմանէ: Եւ գոտաք զայսոսիկ ի մէջ նոցա: Իսկ այն օր ոչինչ յայցանէ ամենակին ոչ յիշեաց: Մարտնչէր ընդ այնոսիկ, որք ոչ ընդ նովին օրինօք մտանէին: Բայց եթէ ի մի օրէնս զարձուցանես զամենայն ազգս և ազինս, որք են ի տէրութեան քում, յայնժամ և աշ-խարհն Յունաց հնագանդեալ մացէ ընդ օրինօք քովի: Ցայտ

Վայր (մինչև այստեղ) խօսեցաւ ի գիշերին յայնմիկ այլն
այսուն.

Դոյնպէս զհարսանեաց առասպելեալ երգեն, այսպես առ-
ակելով.

Տեղ ոսկի տեղայր
Ի փեսայությանն Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ
Ի հարսնութեանն Սաթինկանն։
(Մովսես Խորենացի)

Դոյնպէս—նույնպէս
Զհարսանեաց—հարսանիքի ժա-
մին

Առասպելեալ— առասպելաբանե-
լով

Տեղ—տեղալը, առատ անձրեւ
Տեղ ոսկի տեղայր—ոսկի տեղ
Էր տեղում

Ի փեսայութեանն Արտաշիսի
—Արտաշիսի փեսայության
ժամանակ

Տեղայր մարգարիտ—մարգա-
րիտ Էր տեղում

Ի հարսնութեանն Սաթին-
կանն—Սաթինկի հարսնու-
թյան ժամանակ

Գաս Ժը

Ի նմին ժամու հրամայէ զրել նա յետկար և արձակէ զմի
ի սուրհանդակակացն առ Մուշեց: «Փութով Եկ, առէ՝ զործ հասեալ
է կարի կարեռապոյն: Եւ հրաման ետ փուշտիպանացն իւրոց
և ասէ»: Պատրնոս լելուք, զի յորժամ եկեսցէ նաև ես ձե-
ռամբ նշանակեցից ձեզ, յանկարծակի զձեռս նորա յիսոս կա-
զարնեք և կապեցէ՛ք զնա, բայց պատրաստ լինիջիք, զի այր
քաջ է նա և մի՞ կամ թէ ինքն մեռանի, կամ զիս սպանանէ:
Եւ թէ իսկ ինքն մեռանի, ևս պատասխանի տաց կայսեր
վասն նորա»: Սոյնպէս և բարականացն պատուէր ետ և ասէ.
«Զգոյշ կացէ՛ք, զի յորժամ եկեսցէ Մուշեղի կուռն խորանին
ժիմոյ՝ ի բաց լուծէք ի միջոց նորա գլամարն և զուսերն, ասի-
չով՝ եթի «ոչ է օրէն զինու հանդերձ մտանել յանդիման թա-
գաւորին»:

Ի սմին ժամու—նույն ժամին
Յետկար—երգման թուղթ
Հայրի—շատ, սաստիկ

Հրաման ետ—հրաման տվալ,
Հրամայից
հրաման

Փուշտիպան—թիկնապահ
 Պատրաստ լիրուք—պատրաստ
 եղեք
 Յորժամ—երբ որ
 Նշանակել—նշան տալ նշան
 անել
 Զեռո յեսո կալարուք—ձեռո-
 ները հետև բռնեցեք
 Կալնոււ, կալայ, կալ—բռնել
 Պատրաստ լինիջիք—պատրաստ
 կինեք, պիտի լինեք
 Բարագան—դրնապան
 Խորան—տազավար, վրան
 Ի բաց լուծանել—արձակել,

Ի միջոյ—միջքից (նշանակում
 է նաև մեջ տեղից)
 Կամարն—քամարը (գոտին)
 Սուսեր—սուր
 Ոչ է օրէն—օրէնք չկա, որ
 սովորություն չկա
 Զէն, զինու—զինք
 Զինու հանդիբձ—զինքով, զին-
 քի հետ միասին
 Յանդիման—զիմացը, առջեվը
 Յանդիման լինել—ներկայա-
 նալ

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

Ապառնի I և II

Հրամայական եղանակը, ինչպես տեսանք, ունի ներկա ժա-
 մանակ: Հրամայականն արտահայտվում է նաև ստորագալաստկան
 և սահմանական ապառնի ժամանակներով, այսինքն ապառնի
 I և II ձևերով:

(ա) Հրամայական ապառնի առաջինը կազմվում է իշխ'ր և
 իշխ'ք (և-ի խոն.) և այշի'ր, այշի'ք (և խոն.) վերջավորություն-
 ներով, որոնք ավելանում են բայարմատին և ստանում շեշտ:
 Այսպիս:

Խոնարհում		
I	II	
Պարզ բայ—ապատիջիք	ապատիջիք	
Ածանց—տեսանիջիք	տեսանիջիք	
Կարդայիջիք	Կարդայիջիք	
զարդանայիջիք	զարդանայիջիք	
Ու խոնարհան բայերը չունեն սովորաբար այս ձևերը:		
Հրամայական ապառնի առաջինը թարգմանվում է աշխար- հարաբի հարկադրական, հնթագրական կամ ըղձական եղանակ- ներով: Այսպիս, ապատիջիք=պիտի ազատես, կազատես, տեսա-		

Նիջիր=կտեսնես կամ պիտի տեսնես, կարդասի՞ր=կկարգաս, պիտի կարգաս և այն:

թ) Հրամայական ապառնի երկրորդը կազմվում է սահմանական ապառնի (II ապառնի կամ պարզ) ժամանակի հոգնալի երկրորդ դեմքից: Այս դեմքում սահմ. ապառնի ժամանակի երկրորդ դեմքի քայլիքնում է բառ (եղակիում), իսկ հոգնակիում մնում է նույնը, բայց ընդունելով շեշտ: Այսպես՝

Սահման. ապառնի (II)—գնասաշիք, կարգաս-չիք (հոգն. երկրութիւն)

Հրամայ. ապառնի II—(եղ) գնասա-չիք, կարգաս-չիք յոզն. գնասաշիք, կարգաս-չիք:

Այսպես կազմվում է խոնարհումների հրամայական ապառնի:

Ե (ի) խոնարի.

Անորոշ դերը.

Հրամայ. ապառ.

եղակի

յոզն.

պարզ—գործել

գործես-չիք

գործես-չիք

Ածանց.—տեսան-ել

տես-չիք

տես-չիք

Պատճառ.—գարձուցան-ել

գարձուս-չիք

գարձուս-չիք

Ա խոնարի.

Անորոշ

Հրամ. ապառնի II

եղակի

յոզն.

Պարզ—կարգաւու

կարգաս-չիք

կարգաս-չիք

Ածանց.—ջեռանու

ջարմաս-չիք

ջարմաս-չիք

Պատճառ.—ջեռացան-ել

գարձուս-չիք

գարձուս-չիք

Ու խոն.

Պարզ—թողուու

թող-չիք

թող-չիք

Ածանց.—ջեռանու

ջեռ-չիք

ջեռ-չիք

Պատճառ.—ջեռացան-ել

ջեռուս-չիք

ջեռուս-չիք

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԵՐ

Տեսչի՞ր յորժամ յայտնեցի, ապա գիտասցիս զելս կատարածի դորա: Պատճառ լինիչի ք, զի այր քաջ է նա, կամ ինքն

մեռանի, կամ զի՞ս սպանանէ. Ոչ թողացուցից ձեզ, մինչեւ
կատարիսչիք զամենայն կամս հրամանաց իմոց, Դուք զիտաս-
չիք, ամենայն մարդ, որ բնտկեալ է ի ներքոյ երկնի... Զօրէնս-
մողութեան յանձն կալջիք. Զի բարեկարգութիւն հաստատեաբ-
մեզ ծառայեսչիք միամտութեամբ:

ԱՐԳԵԼՈԿԱՆ (ԿԱՄ ՃԻՏԱԿԱՆ) ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրամայականի բացասական ձեզ կոչվում է արգելական
հրամայական,

Սրգելական հրամայականը կազմելու համար բայց առաջ-
դում ենք արգելականի եղանակիչը՝ մի՛: Մի՛ եղանակիչը
զրվում է՝

ա) Սահմանական եղանակի ներկա ժամանակի երկրորդ
զեմֆի վրա. այս զեմֆում եղակի երկրորդ զեմֆի և զերջավո-
րությունը փոխարինվում է բառվ, իսկ հոգնակին մնում է
նույնը. Այսպես՝

Ներկա Ա զեմֆ—երթաս, զրես, թողուս, տեսանես:
Արգելակ. հրամ.—մի՛ երթար, մի՛ զրեր, մի՛ թողուր, մի՛ տե-
սաներ և այլն:

բ) Ապահնի առաջին (ստորադաս.) ժամանակի երկրորդ
զեմֆի վրա. այսպես՝ մի՛ առնիցես, մի՛ զենուցուս (չհագնես)՝
մի՛ առնուցուս (չառնես) և այլն:

Մի՛ եղանակիչը երրեմն զրվում է նաև սահմ. ապառնի
(II) և անորոշ զերբայի վրա. մի՛ կալ հակառակ=հակառակ
չգնալ, մի՛ տեսցիս և այլն:

Մի՛ եղանակիչը զրվում է նախադաս և տունց շեշտի ՀՀ
կարելի զործածել:

ԱՐԳԵԼՈԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

ա) Ա (ի) խոնարհում

Պարզ—սիրել

Ածանց.—տեսանել

Պատճառ.—զարձուցանել

Եղակի—մի՛ սիրել (մի՛ սիրիլ) մի՛ տեսաներ, մի՛ զարձու-
ցանել

Ցողնակի—մի՛ սիրելք (մի՛ սիրելք), մի՛ տեսանելք, մի՛ զարձ-
ուցանելք

ի խոնարհում

Պարզ—բնակ-իլ

Ածանց.—ուսան-իլ

Պատճառ.—ուսուցան-ել

Յգակի—մի բնակ-իր,
Յոգնակի—մի բնակ-իք,
մի ուսան-իր
մի ուսան-իք
մի ուսուցան-եր
մի ուսուցան-էք

բ) Ա. խոնարհում

Պարզ—կարդ-ալ

Ածանց.—զոհ-ան-ալ

մերձ-են-ալ

Յգակի—մի կարդ-ար,
մի գոհանար
մի մերձ-են-ար (մի
մոտենար)

Յոգնակի—մի կարդ-աք,
մի գոհան-աք
մի մերձ-են-աք (մի
մոտենաք)

գ) Ու. խոնարհում

Պարզ—թող-ուլ

Ածանց.—զարթ-ն-ուլ

Պատճառ.—թող-ուցան-ել

Յգակի—մի թողուր
մի զարթ-ն-ուր
մի թող-ուցան-եր
Յոգնակի—մի թողուք
մի զարթ-ն-ուք
մի թող-ուցան-էք

Վարժություններ արգելական հրամայականի շուրջը

Մ' ի ինիք ամբարտաւան, յորժամ ի ցանկալի փառաւորու-
թիւնն իցես և մի գծուձ յորժամ ի թշուառութիւն հասանիցես:
Անդ կացցես և զլոյս մի տեսցես, եւ ընդ այս մի՛ ոք զարմացի
(այս բանի վրա ոչ ոք թող չզարմանա): Այլ դու յայսը ամե-
նայնի զմեղ մի՛ հարցաներ, Մի՛ երբաք ձանապարհ ընդ նո-
սա:

Ամբարտաւան—գոռող, հողաբա

Գծուձ կամ գծուծ—խեղճ

Բնդ այս—այս բանի վրա

Յայսը ամենայնի—այս բոլորի մասին

Եւ թէպէտ ընդ ամենայն ազգս առնէր զանկարգութիւնոց զայս, առաւել ընդ Հայոց աշխարհին մարտնչէր: Քանզի տես սանէր զնոսա ջերմագոյնս յաստուածապաշտութեան, մանաւանդ որք էին յազգէ նախարարաց Հայոց, և անմեղութեամբ ունեին զուուր քարոզութիւն առաքելոցն և զմարգարէից: Պատրէր զոմանս ի նոցանէ սակով և արծաթով, և զբաղումս այլով ևս առատ պարզօք: Իսկ զոմանս ապարակօք և մեծամեծ դեղօք, զոմանս պատուվիք և իշխանութեամբք մեծամեծօք: Եւ այլ ևս սնոսի յոյս ոգւոց առաջի դնէր, և այսպէս հրապուրէր և յորդորէր հանապազ, «Եթէ միայն, ասէ, զօրէնս մոզութեան յանձն կալջիք, և ձեր մոլորութիւնդ սրտի մտօք գարձուցանիցէք ի ճշմարտութիւն երեւլի մերոց դիւցազնական օրինացս, ի մեծութիւնս և յաւազութիւնս հասուցից հաւասար իմոյ սիրելի նախարարացս, նա առաւել ևս զանցուցից (Եղիշէ):

Թէպէտ—թեկուզ
Ընդ ամենայն ազգս առնէր—
բրոլու ազգերի գլխին բերում էր
Մարտնչէր—պայքարում էր
Զերմագոյն—ավելի ջերմեռանդ
Ունեին—բռնում էին, պահում
էին
Քարոզութիւն առաքելոցն և
մարգարէից—առաքյալների և
մարգարեների քարոզությունը
Պատրէր զոմանս ի նոցանէ—
նրանցից ոմանց խարում էր
Այլիս՝ առատ պարզօք—էլու-
րիշ առատ պարզիներով
Մնոտի—դատարկ
Եւ այլ ևս սնոսի յոյս ոգւոց ա-
ռաջի դնէր—ուրիշ գատարկ
հույսեր էլ տալիս էր (առա-
ջազրում էր, խոստանում)
Յուրդորէր—հորդորում էր, (սիրտն
առնել, զրդուել)
Հանապազ—միշտ

Յանձն կալջիք—յանձն առ-
նեք
Զօրէնս մոզութեան—մոզա-
կան օրինքը
Սրտի մտօք—սրտով ու մըտ-
քով
Երեւլի մերոց դիւցազնա-
կան օրինացս—մեր զու-
ցազնական պայծառ օրենքի-
երեւլի—նշանավոր, պայծառ-
երեւլի
Գարձուցանիցէք ի ճշմարտու-
թիւն երեւլի գյուցազնական-
օրինացս—դարձնեք մեր-
գյուց, այս պայծառ օրին-
քի ճշմարտությանը
Հասուցից ի մեծութիւնս և
յաւագությունս—մեծության-
և աւագությիւն կհասցնեմ
Հաւասար իմոյ սիրելի նախա-
րացս—իմ սիրելի նախա-
րացներին հավասար

Նա առաւել—ավելի և վո
Զանցուցից (զանցուցանել) — նա առաւել ևս զանցուցից—
բարձրացնել, գերապահնցել

Ետ հրաման բարձր բարբառով և առէ.
«Ամենայն ազգ և լեզուք՝ որ են ընդ իմով իշխանութեամբ՝ զադարեսցին յիւրաքանչիւր մոլոր օրինաց, և միայնոց մկեցեն յերկրպագութիւն արեգական, զոհս ժամանակնելով և աստուած անուանելով և սպաս (=ըսպաս) ունելով կրակի. և ի վերայ այս ամենայնի և զմոգութեան օրէնս կատարելով, մի ինչ ամենանեն պայման առնիցենք: Զայս ասելով քարոզ կարգայր ի մեծի կարաւանին, և պատուէր սաստիք ի վերաց զնէր ամենանցուն. և գեսպանս ստիպաւ արձակէր յամենայն ազգս հեռաւորս, զգոյն պատուէր հրամանի առ ամենանեսեան արկանէր (Եղիշէ):

Ետ հրաման—հրաման տվեց
Ընդ իմով իշխանութեամբ—իմ
իշխանության տակ

Դադարեսցին—թող դադարեն
Յիւրաքանչիւր մոլոր օրինաց—
ամեն մի սուս (սխալ) օրին-
քից

Մի այնոյ եկեսցեն յերկրպատ-
գութիւն արեգական (եկես-
ցեն յերկրպագություն մի-
այնոյ արեգական—զան եր-
կըրպագելու (թող երկըրպագեն))
միակ արեգակին

Սպաս ունել—ծանայել, սպասուր-
պել

Պատուէր սաստիք ի վերայ
զնէր ամենանցուն (=սաստիք
պատուէր զնէր ի վերայ ամե-
նանցուն) խստիվ պատվերուց
էր քոլորին

Դեսպանս ստիպաւ արձակէր—
շտապով դեսպաններ էր ու
զարկում
Դեսպան—լուր տանող

նա առաւել ևս զանցուցից—
էլ ավելի կրարձրացնեմ

Ի վերայ այսոր ամենայնի—
բացի այս բոլորից (այս
բոլորի վրա)

Զմոգութեան օրէնս կատա-
րելով (=կատարելով զօ-
րէնս մոգութեան)=մո-
զական օրէնքը (ծեսը) կա-
տարելով

Մի ինչ պակաս առնիցեն (մի
առնիցեն ինչ պակաս)—
ոչինչ պակաս չանեն

Քարոզ կարգայր—հրապարա-
կում էր

Քարոզ—բարձր ձայնով հրա-
մանը հրապարակել, մու-
նելովիկ

Կարաւան—բանակ
Յամենայն ազգս հեռաւորս—
բոլոր հեռավոր ազգերին

Զգոյն պատուէր հրամանի—
նույն պատվերն ու հը-
րամանը

Առ ամենանեսեան արկանէր
պատուէր—լուրին պատ-
վիրում էր

Դաս ԺԹ.

ԴԵՐԲԱՅՆԵՐ

Գրաբարում՝ գերբայները չորս են՝ անորոշ, ներկա կամ
Ֆնթակայական, անցյալ և ապառնի:

ա) ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Անորոշ գերբայը արտահայտում է սոսկ զործողությունը
Օրինակ՝ գրել, գնալ թողուլ բնակիլ և այլն:

Գրաբարում անորոշ գերբայն ունի հետեւյալ ձևերը՝ ել կամ
իլ, ալ, ուլ, ուլ ե(ի), ա, ու ձայնավորներով որոշվում է խո-
նարհման տեսակը:

Ել գերբայական ձևը (էական բայը) հին գրաբարում ե-
պել է եալ, որից և կազմվել են ներկայի ձևերը՝ եամ, եաս,
եյ (=եմ, ես, եյ (է)), եամք, եայք, եան (=եմք, եյք=էք,
ֆն). գր-եամ, գր-եաս, գր-եայ (գր-եմ, գր-ես, գր-է), գր-
եամք, գր-եայք, գր-եան (գր-եմք, գր-էք, գր-ֆն):

Անորոշ գերբայը գրաբարում հորովվում է ո հորովումով
(արտաքին թերման) և միայն եզակի թվով: Օրինակ՝ գրել, գր-
եայ, ի գրելոյ, գրելով (գրել, գրելու, գրելոց, գրելով):

բ) ՆԵՐԿԱ ԿԱՄ ԵՆԹԱԿԱԹԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

Ներկա կամ ենթակայական գերբայն արտահայտում է ներ-
կա ժամանակում կատարվող զործողության սուրեկտը (հնթա-
կան, անձը): Օրինակ՝ տեսող, տուփչ (տըլիչ), պարզեիչ և
այլն:

Ներկա կամ ենթակայական գերբայը գրաբարում ունի
սառը վերջավորությունը, որ հետագայում գրվել է օդ, ոդ (նույն
այս ոդ վերջավորությունն ունի նաև աշխարհաբարում): Սյու-
սպես՝ տեսաւող=տեսող=տես-ոդ և այլն*),

Ներկա կամ ենթակայական գերբայը թե գրաբարում և թե

*) Գրաբարի հին քերականության մեջ իչ համարվել է հնթակ. գեր-
բարական վերջավորության օք. տուփչ, պարզեիչ և այլն:

աշխարհաբում արտահայտում է նաև հատկություն: Օրինակ՝
այս արքեցող (հարբեցող մարդ), սիրող իմաստութեան=իմաս-
տություն սիրող, հալածիչ մարդկան և այլն: Այս բոլոր գեղ-
քերում ենթակայական գերբայը զիտակցվում է որպես ածա-
կան:

Ներկա կամ ենթակայական գերբայը զիտակցվում է որպես
գոյական, երբ գործ է ածվում առանձին: Օրինակ՝ կորա զնե-
զիչս=կորցրու նեղիչներին և այլն:

Ներկա կամ ենթակայական գերբայը հոլովվում է իւս
խառն հոլովումով՝ եղակի և հոգնակի: Այսպես՝

Եզակի քիւ

Ող, աւղ, օղ
գերջավորութ:

Ուղղ. սիրող (սիրաւզ, օղ)

Ս. սիրողի (սիրաւզի)

Տ. սիրողի (սիրաւզի)

Հ. զսիրող (զսիրաւզ)

Գ. ի սիրողէ (ի սիրաւզէ) (է)

Բ. սիրողաւ (սիրաւզաւզ)

Ն. ի սիրողի (ի սիրաւզի)

յոզեակի քիւ

Ուղղ. սիրողք (սիրաւզք, օղք)

Ս. սիրողաց (սիրաւզաց, սիրօղաց)

Տ. սիրողաց (սիրաւզաց, սիրօղաց)

Հ. զսիրողս (զսիրաւզս, զսիրօս)

Գ. ի սիրողաց (ի սիրաւզաց, սիրօղաց)

Բ. սիրողաւք (օք), սիրաւզաւք, օք

Ն. ի սիրողս (ի սիրաւզս, սիրօզս)

իչ

Ուղղ. նեղիչ

նեղիչք (նեղիչներ)

Ս. նեղչի (նեղչի)

նեղչաց (նեղիչների)

Տ. նեղչի (նեղչին)

նեղչաց

Հ. զնեղիչ

զնեղիչս

Բ. ի նեղչէ

ի նեղչաց

Գ. նեղչաւ

նեղչաւք, օք

Ն. ի նեղչի

ի նեղիչս

Ներկա կամ Ենթակայական դերբայը կազմվում է երկու
ձերից՝ ա) անորոշ դերբայի արտատից կամ՝ բ) առիստի բնից
ավելացնելով աւզ = օդ (ող) կամ իչ մասնիկները: Այսպես՝

ա) ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ԱՐՄԱՏԻՑԻՑ

Անորոշ դերբայ	Երկայ կամ ենթակ. դերբայ
Որսաւլ	որսաւզ, որսօղ (=որսօղ)
Տեսանել	տեսաւզ, տեսօղ (=տեսօղ)
Ուսանել	ուսաւզ, ուսօղ (=ուսօղ) և

այլն:

բ) ԱՈՐԻՍՏԻ ԲՆԻՑ

Անորոշ դերբայ	Առիստի բուն
Զարմանաւլ	զարմաց
Գնաւլ	գնաց
Կամել	կամեց
Մատուցանել	մատոյց
Ուսուցանել	ուսոյց

Երկայ կամ ենթակ. դերբայ

զարմացաւզ, օդ կամ զարմացող
գնացաւզ, օդ կամ գնացող
կամեցաւզ, օդ կամ կամեցող
մատոյցաւզ, օդ մատոյցող
ուսոյցող կամ ուսուցիչ

Ենթակայական դերբայն արտահայտվում է նաև մի ամբողջ նախադասությամբ (զիմավոր բայով և որ հարաբերական դերանունով), այս գեղագում զիմավոր բայը հաճախ ստանում է և հոդը: Այսպես՝ փոխանակ ասելու գքեզ տեսանողն, ասվում է՝ «Ի տեսանէ զքեզ, կամ որ ասէն» (—նա, որ ասէ) և այլն:

Զայն հառաջանաց, հեծոթեան սրտի ողբոց ազադակ, քեզ վերընծայեմ, տեսողի զազանեաց: Նա յամենայնի կարող է ի կիր արկանել և պայծառանալ: Զարարածս փոխանակ արարչին մեծարողի, Յերկեւզէ ինչ ոչ զանգիսող (չվախեցող): Հուժկու-

Գ. տեսելով
Ն. ի տեսեալ

սիրեցելով
ի սիրեցեալ

յոզն. ք.

Ուղղ. տեսեալք	սիրեցեալք
Ա. տեսելոց	սիրեցելոց
Տ. տեսելոց	սիրեցելոց
Հ. տեսեալս	դսիրեցեալս
Բ. ի տեսելոց	ի սիրեցելոց
Գ. տեսելովք	սիրեցելովք
Ն. ի տեսեալս	ի սիրեցեալս

Ուղղականի եալ գերբայական ձեզը շհշտի տեղափոխության հետեանքով թեք հոլովելում զառնում է նև (տեսեալը տեսելով): Այս հոլովման մեջ երեսում է անորոշ գերբայների նույնությունը:

ՊԱՏԵՐԱԶՄ ԸՆԴ ԶՈՒ ԴՈՄԵՏԻԱՆՈՍԻ Ի ԲԱՍԵԱՆ (Ընդդժել անցյալ գերբայները)

Ազմուկ շինթից իմն լեալ յարեմուտս, ընդ որ վստահացեալ Արտաշէս նշկահեալ (ապստամբել) ընդգիմանայ հոռվմայեցացն, ոչ տալով հարկաւ իսկ Դոմետիանոսի կայսեր ցատոցեալ զօրս ի վերայ Արտաշիսի առաքէ. որոց հասեալ ի կողմանս կեսարու, զծիրանը և զգօրսն արեմտեան առաջի եղեալ ածեն տապնապաւ մինչեւ ցքսջ ընդգրածակ հովիտն Բասենայ. յորում ընդգէմ զիպեալ Արտաւազդ արենելայ և հիւսիսային զօրքն հանդերձ ամենայն որդուվվն արքայի, և պատերազմեալ սարսակապէս, վտանգին (նիզն ընկնել):

դ) Ա.Պ.Ռ.Ն.Ի ԴԵՐԲԱՅ

Ապանի դերբայն արտահայտում է ապադայում կտտարշեմք գործողություն:

Ապանի դերբայն արտահայտում է գործողության և ժամանակի գաղափար առանց թվի ու գեմքի:

Ապանի բառը գրաբար է և կազմված է ապ բացասական մասնիկից և առնել բայից, որ նշանակում է անել՝ կատարել, այստեղից՝ ապանի=չկատարված, չարված գործողություն:

աքռվինեան յուրաքանչյուր ապառնի գործողությունն իրական չործողություն չէ, այլ ենթագրելի, մտածելի գործողությունն:

Ապառնի դերբայը կազմվում է անորոշ գերբայից բառավերջում ավելացնելով ոց վերջավորությունը, որ հոգնակի է: Այսպես՝

Անորոշ դերբայ—իմանալ, գործել խաղալ, թողու թուցանել

Ապառնի դերբայ—իմանալոց, գործելոց խաղալոց, թողլոց, թուցանելոց

Այս ձևով կառուցված ապառնի գերբայը ներգործական է: Կրտսվականի ապառնի գերբայը կազմելու համար անոռոշ գերբային ավելանում է իւ Այսպիս:

Անորոշ դերբայ—գրել, խնդրել, խօսիլ, խաղար անսալ հեղուկ

Ապառնի դերբայ—գրելի, խնդրելի, խօսելի, խաղալի, անսալի, հեղիլ (հեղըլ)

Ապառնի գերբայը համապատասխանում է աշխարհաբարեկ ապառնիին. Գրելոց=գրելու, իմանալոց=իմանալու, թողլոց=թողնելու, գրելի=գրվելու, անսալի=լսվելու, խօսելի=խօսվելու և այլն:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երբեալ բնակէ ի լինուուին միում ի գաշտավայրի, յորում ապկաւք ի մարդկանէ յառաջապոյն ցրուելոցն դադարեալ բնակէին, զորս հնազանդ իւր արարեալ Հայկ, շինէ անդ տուն բնակութեան կալուածոց: Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս: Խնամ տարեալ հոգացայ ամենայնի, որչափ միաք և հասողութիւն բաւեցին: Իսկ նոցա անցեալ ընդ նեղուցս միքրատայ կամքջին, ընկեցին զփայտն զկնի իւրեանց (իրենց հեց հետո) (Մագսէս Խորենացի):

Զայս ասելով քարոզ կարդայր ի մեծի կարաւանին: Զայս տեսեալ թագաւորին թուշանաց ոչ հանդուրժէր (չէր կարողանում) քնդ առաջելանելնորա պատերազմաւ: Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է: Մոնշելով բարբառ արձակեալ և առէ երդուելիմ յարեկակն (երգվելեմ արեգակով), որ ճառագայթիւն իւրաքանչյուրէ զամենայն տիեզերս և ջերմութեամբն կենդանացնէ զամենայն գոյացեալսն, եթէ ոչ վաղիւ առաւօտն (վաղը, առաւ-

վոտյան), ընդ երեւումն սքանչելոյն (սքանչելու երևալու ժամանակ), ընդ իս (ինձ հետ) իւրաքանչիւր ծունը նման ոչ կրկնենջիք՝ խոստովանելով զնա աստուած, ոչինչ բռղացուցից ձեզ (չիմ թողի ձեղ)՝ զամենայն նեղութիւնս չարչարանացն ի վերացածելով, մինչեւ ակամայ կատարիցէք զկամս հրամանաց իմոցն (Եղիշէ):

ՍՊԱՆՈՒՄՆ ՎԱՀԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԵՆԻ

Բայց Մեհրուժան ոչ բաւականացաւ կատարել զչարիսնոր արար քրիստոնէիցն և առաւել չայստանեաց աշխարհիսուայլ առնու զզօրոսն Պարսից և զայ թագաւորել Հայոց հրամանաւ Շապիկոնեան, և եկեալ մտեալ յաշխարհս Հայոց աներկիւլ համարձակութեամբ խորհեալ խորհուրդ, զոր ոչ կարաց հաստատել: Քանզի Սամուէլորդի Վահանայ զնաց, ընդ առաջ հօր իւրոյ: Կարծելով Վահանայ խոնարհել զորդին իւր յանկանզնելի կործանումն, զոր մեկուսեալ Սամուէլի զհայը իւր Վահան, իրը այն, թէ խորհիցին ինչ վասն որոյ եկեալն էին, իրրե հարուստ մի մեկնեցան ի գնդէն պարսից՝ ամբարձեալ Սամուէլի զմբողնին՝ աղդոյց վէրադ վերայ եղեալ առ ժամանյն եհատ զնա ի կենաց. և զարձեալ անտի սպան և զմայր իւր զՃաճատուհի, զի իրկոքիննուրացեալ էին ի Քրիստոսէ. և ինքն զնաց փախստական Փարսից ի կողմանս թաղտեաց: (Թովմա Արձրունի)

Խորհեալ խորհուրդ—միտք մը տածեց (մտածեց մի բան)
Զոր ոչ կարաց հաստատել—որը չկարողացավ ի կատար ածել կարծելով Վահանայ—Վահանը կարծում է (կարծեց), թե
Խոնարհել զորդին իւր—իր որդին էջել է:
Յանկանզնելի կործանումն—անզիմազրելի կործանումն
Մեկուսեալ—առանձնացնելով Մեկուսեալ Սամուէլի—Սամուէլը մեկուսացը

իր այն—իր թե ենորհիցին ինչ վասն որոց եկեալ էին—խորհուրդ անենուայն բանի մտաբն, որի համար եկել էին իրրե հարուստ մի—հեռու Մեկնեցան ի գնդէն Պարսից—հեռացան Պարսից գնդից Ամբարձեալ Սամուէլի—Սամուէլը բարձրացընից Զմիողնին (միողնի)՝ միտք սայրի (այսինքն մի բեր նով թուր)

Աղղոյ վերս (աղղոյ վերք) —
մահացու վերք
Աղղոյ վերս ի վերաց եղեալ —
մահացու վերք պատճառել
Առ ժամայն — իսկույյն
Ենատ (հատանել բառից) — կըտ-
ըեց
Ենատ ի կենաց — զրկեց կյանքից

Դարձեալ անտի — այնառեղից
վերադառնալով
Սպան (սպանանել բառից) —
սպանեց
Ուրացեալ էին ի Քրիստոսէ —
ուրացել էին Քրիստոսին
Երկոքինն — երկուսը միասին

ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆ ԻՇԽԱՆԻՆ ԱՂՈՒԱՆԻՑ

Իսկ Բուխայի տոնեալ զբազմութիւն զօրացն իւրաց՝ իշտնէ
ի գաշտն Գալաքրացւոց, և երթեալ մտանէ ի քաղաքն մեծ Պար-
ուաւ եւ սկսաւ զոռաւ, և խորհնէր զթոյնս չարութեանն թափեք
ի վերայ իշխանին Աղուանից, և յուեր ու նա կոչելով ի նատ-
զանդութիւն, այլ նա ոչ տայր տեղի բանից նորա, քանզի քա-
ջագոյնս զիտէր զբարա նորա խարերայու եւ ժողովեալ զբնա-
կիչս աշխարհին համօրէն զարս և զկանայս և զայլս յերկրէն
Աղուանից բազմութիւն ուամիկ շինականաց և լէզէոնս զօրակա-
նաց, եւ Բուխայի իմացեալ որպիսի պատրաստութեամբ կազմի
իշխանն Աղուանից, տարակուսէր ի միտս իւր զի և զբազումա-
պատերազմեալ պէսպէս մարտիւք, և ոչ ինչ կարացեալ ստնա-
նել անմարտնչելի ամրոցացն և քաջութեան արանցն որ ի նմա-
ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն:

Եւ իշխանն դարձուցանէ այցալիսի իմն պատասխանի.

«Օրէն է աշխարհակալաց արքունի ինսամակալութեամբ
զնալ ընդ աշխարհն իրքն առ հնազանդու, և զնեզութիւնս տառա-
պելոց բառնաւ և ի դիւը հանել իրքն զինամարկուս, և ոչ ասո-
զակարար աւերել և սրով և գերութեամբ յաւեր զարձուցանել-
և զու թէ սատիկան իսպազութեան էիր եկեալ յարքունուսատ
զշինութիւն պարզեաբաշխէիր սոցա և ոչ զաւերս և զիսուզու-
թիւն, եւ արդ յայտնի լիցե, զի որչափ բաւէ զօրութիւն իմ և
իցեմ կենդանի՝ կացից ընդդէմ զօրութեամբ. և քեզ եթէ հաճոյք
թուիցի ապրեցուցանել զքեզ և զզօրս քո՞ արի ել աստի և գնու-
ի սահմանաց իմոց: Ապա թէ փութեա ելանել ի կենաց աստի-
ու զայրուց կատազութեան քո՞ և զոսկերս ցրուես յանապատա-
և մինել կերակուր գազանաց երկրի և թոչնոց երկնից՝ կամք քո-
լիցին. Արդ զհարեալ է յիմմէ կողմանէ շատխօսութիւն ընդ քեզ-

Հ ձեռս քո է խաղաղութիւն և խռովութիւնն եթէ, որպես ասացի, ի բաց զնամ յինէն՝ խաղաղութիւն է, և թէ ոչ պատերազմ և կար և ճակատամարտ, և զու նպատակ՝ և աղեղն իմ խոցութիչ, զու ախոյեան՝ և մանկունք իմ յաղթանակ, զու սոսի՝ և գործ իմ պատապարտիչք, քո պատերազմ և մեր յաղթանակ, քո մաքմին և իմ նիզակ, քո պարանոց և իմ սոսուեր... զու միշտ ծովական և մեք կարթ, ի քիմս քո ի վեց ձգելով զքեզ ի խօսոց անդնդոց, և զու իբրև զեղջերու առանց եղջեր՝ և մեք արծուիք ի վերոյ քո կուրացուցիչք աչաց քոց:

(Թովմա Արծրունի)

ՅԵ ԲՈՒԺԱՅԻ ԽՄԱԳԻԱԼ—Կ ԲՈՒՆ
ԽԱՆ ԽՄԱՆԱԾՎ

ՊՐՈԳԻՍԻ պատրաստութեամբ
կազմի—ինչպիսի պատրաս-
տությամբ է պատրաստվում
(ինչ պատրաստություն է
առենում)

ՊՀԱՄՔԻ մարտիւք—ահսակ տե-
տեսակ մարտիւք

ՊԱՆ անել—մի բան անել կարո-
ղանալ, վնասել

ՊՂՈՔԱԿԱՆ բանիւք—ողոքական
(տղաչական, անուշ, կակուղ)
խռաքերով

ՊԽԸՀՔ ի ճաւանութիւն—կան-
չում չք ճամաձայնելու (ճրա-
վիրում էք ճաշովելու)

Արք—վեր կաց
ՅՇ լ ասափ—գնամ այստեղից.

ԱՌ զայրուցս կատաղութեան
քո—քո սաստիկ քարկության
և կատաղության պատճառով
(ըաբկությունից և կատաղու-
թյունից)

Եթէ ի բաց զնամ յինէն—եթէ
հեռանաս ինձնից

Ի քիմս քո—քո քմքի մեջ

Ի վեր ձգելով զքեզ և խորոց
անզնդոց—վեր ձգելով քեզ
ինը անզունզներից (գուրս
ենք քաշում քեզ)

Իրեն զեղջերու առանց եղջեր—
որպես եղջերու առանց եղ-
ջուրի

Բանալ—վերացնել
Ի զիւր հանել—զիւրացնել
հեշտացնել

Իրեն զինամարկու—որպես
հոգատար, ինամոզ
Յաւեր գարձուցանել—ավե-
րել ավերակ դարձնել

Կացից ընդդէմ զօրութեամբ—
ուժով կզիմապըեմ

ՈՐՀԱՓ բաւէ զօրութիւն իմ—
որքան թույլ են տալիս
(ներում են) իմ ուժերը

Իցեմ կենդանի—կենդանի կը-
մինեմ

Ապրեցուցանել—ապատել վըր-
կել

Ելանել ի կենաց աստի—հե-
ռանալ (զնալ) այս կյան-
քից (միոնել)

Եամք քո լիցեն—թող քո Սուսեր—սուր
 կամքը լինի Մեր արծուիք ի վերայ քո—
 Վարեալ է—վերջացել է մհնք արծիվսեր քո—
 Ախոյան—թշնամի, հակառակորդ վերեվը (քո վերից)
 (բասացի նշանակում է կըտ- Կուրացուցիչ աչաց քոց—քո
 քիմ, հարձակող) աչքերը կուրացնողներ

* *

Դաս Ի

Իսկ իրեն եկին, հասին աւուրք ջերոս, հարաւահողմն գառ
 քրանցն բանալոյ, համբարձաւ թագաւորն ի կող-
 մանցն յայնցանէ. եկին, իջին յԱյրարատ գաւառ, ի Վաղար-
 շապատ քաղաք՝ և մինչդեռ ուրախութեամբ հանգուցեալ եին,
 ի միտ արկեալ քագաւորին գումարտակ առնէր անզրէն աբշա-
 ռել ի կողմանս Պարոից:

Իրեն զայն լսէր Պարթեն, զերգումն ուխտին յիշէր, որ
 ընդ Պարսից արքային ուխտեալ եր. Նաև զխոստմունան յիշէր
 զպարգևացն և ի բուն աշխարհն փափազէր, որ Պահլաւն կոչէր և
 վատ խորհուրդ ի միտ արկանէր (Ագաթանգեղոս):

Զերոտ—տաք.
 Համբառնալ, համբարձաւ—տե-
 զեց վեր կենալ
 Հանգուցեալ էին—հանգստացել
 էին, հանզիստ էին առել
 ի միտ արկեալ թագաւորին—
 թագաւորի միտն ընկավ, թա-
 գավորը հիշեց
 Գումարտակ առնէր—զորք էր
 ժողովում
 Անզրէն—կրկին

Ի կողմանս Պարսից—գեպէ
 Պարսից կողմերը
 Ուխտ—պայման, դաշն, կատ
 Ուխտեալ եր ընդ Պարսից ար-
 քային—(այն պայմանը),
 որ հաստատել եր պարսից
 թագավորի հետ
 Յիշէր զպարգևացն—հիշում էր
 պարգևակի մասին

ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

Բացի բայիրի հիմնական ժամանակներից զբարարում (ինչ-
 պես և աշխարհաբարում) զոյսություն ունեն նաև բաղադրյալ
 ժամանակներ:

Բաղադրյալ բառի փոխարեն հին քերականության մեջ գործ է ածվել հարակատար և գերակատար:

Բաղադրյալ ժամանակներն արտահայտում են բայցի խոսնարհման ժամանակի որևէ նըրբությունը կամ երանգավորումը, որ գոյություն չունի խոնարհման հիմնական ձևերի մեջ:

Բաղադրյալ ժամանակները կազմվում են բայցի դերբայական ձեզի և եական բայցի միացուրցյունից: Օրինակ՝ գրեալ էր (գրե էր կամ զրած էր), գրելոց էր (զրելու էր) և այլն:

Բաղադրյալ ժամանակները կազմող գերբայները երկու են՝ անցյալ և ապառնի: Օրինակ՝ տեսեաւ, գը-եաւ, սիրեց-եաւ (անց, գերբ.), տեսանելոց, գրելոց, սիրելոց (ապառնի գերբայ) և այլն:

Բաղադրյալ ժամանակները կազմող օժանդակ բայցերը նույնպես երկու են՝ եմ (էական) և լինիմ:

Բաղադրյալ ժամանակները կազմվում են այսպես՝

Եմ եական բայց

ա) Անցեալ դերբայով և եմ էական բայցով

Եմ էական բայցի ներկա, անցյալ անկատար և ստորադասկան ապառնի (առաջին ապառնի) ժամանակաձևիները զրվում են անցյալ դերբայի վրա:

Ներկա ժաման. —սիրեաւ եմ, սիրեալ ես, սիրեալ է,
սիրեալ եմք, սիրեալ էք, սիրեալ են.

Անցյալ անկատ. —սիրեալ էր, սիրեալ էիր, սիրեալ էր,
սիրեալ էաք, սիրեալ էքք, սիրեալ էին:

Ստորադ. ապառնի (1) սիրեալ իցեմ, սիրեալ իցես, սիրեալ
իցէ, սիրեալ իցեմք, սիրեալ իցէք, սիրեալ իցեն:

Հական բայցով և անցյալ դերբայով կողմված այս ժամանակներն ունեն թե ներզործականի և թե կրավորականի իշմաստ: Այսպես, սիրեալ եմ=սիրել կամ սիրվել եմ, սիրեալ էիլ —սիրել կամ սիրվել էիլ, սիրեալ իցեմ=սիրած կամ սիրված մինեմ և այլն:

բ) Ապառնի դերբայով և եմ եական բայցով

Եմ էական բայցի ներկա, անցյալ անկատար և ստորադասկան ապառնի (առաջին ապառնի) ժամանակները զրվում են ապառնի դերբայի վրա:

Ներկա—սիրելոց եմ, սիրելոց ես, սիրելոց է,
սիրելոց եմք, սիրելոց էք, սիրելոց ենք

Անց.—սիրելոց էի, սիրելոց էիր, սիրելոց էր,
սիրելոց էաք, սիրելոց էիք, սիրելոց էին-

Ստ. ապառնի. —սիրելոց իցեմ, սիրելոց իցես, սիրելոց իցե-

սիրելոց իցեմք, սիրելոց իցէք, սիրելոց իցեն-

Ապառնի դերբայով կազմված բաղադրյալ ժամանակները.

Նույնպես ունեն թե ներգործականին թե կրավորականի իմաստ-

Այսպես. սիրելոց եմ=սիրելու կամ սիրվելու եմ, սիրելոց էի=սիրելու կամ սիրվելու էի, սիրելոց իցեմ=սիրելու կամ սիր-

վելու լինեմ և այլն:

Ապառնի դերբայով—կազմված բաղադրյալ ժամանակը՝
զրակվորում է բայի արտահայտած դործողության կամ զրու-

թյան նկատմամբ ունեցած մեր տրամադրությունը կամ վերա-

բերմունքը ներկա, անցյալ և ապառնի ժամանակում:

Լինիմ բայը

Լինիմ բայի ներկա, անց, անկատար և ստորադառական-
ապառնի (առաջին ապառնի), անցյալ կատարյալի և հրաժայական-
եզանակի բայաձեվերը զրվում են անցյալ գերբայի հետ և կազ-
մում համապատասխան բաղադրյալ ժամանակ։ Այսպես՝

Ներկայ—սիրեալ լինիմ (սիրած կամ սիրված եմ լի-
նում)

Անց. անկատ.—սիրեալ լինէի (սիրած կամ սիրված էի լի-
նում)

Ստ. ապառնի (1)—սիրեալ լինիցիմ (սիրած կամ սիրված կը-
լինեմ)

Անց. կատար.—սիրեալ եղէ (սիրած կամ սիրված եղա)՝
Հրամ. եղան.—սիրեալ լիր (սիրած կամ սիրված եղիր).

ԲԱՆԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

1. ԵՄ ԷՍԿԱՆ ԲԱՑԸ

ա) Անցյալ դերբայով

Ներկայ ժամանակ

(Յարակատար կամ վաղակատար)

Եզակի թիւ

- «Արեալ եմ (սիրած, սիրված եմ, սիրել, սիրվել եմ)
կամ սիրեալ է իմ
- «Արեալ ես (սիրած, սիրված ես, սիրել, սիրվել ես)
կամ սիրեալ է քո
- «Արեալէ (սիրած, սիրված է, սիրել, սիրվել է)
կամ սիրեալ է նորա

Յոզեակի թիւ

- «Արեալ եմք (սիրած, սիրված ենք, սիրել սիրվել ենք)
կամ սիրեալ է մեր
- «Արեալ էք (սիրած, սիրված էք, սիրել, սիրվել էք)
կամ սիրեալ է ձեր
- «Արեալ են (սիրած, սիրված են, սիրել սիրվել են)
կամ սիրեալ է նոյս

Անցեալ անկատար

Եզակի թիւ

- «Արեալ էի (սիրած, սիրված էի, սիրել, սիրվել էի)
կամ սիրեալ էր իմ
- «Արեալ էիք (» » էիք, սիրել սիրվել էիք)
կամ սիրեալ էր քո
- «Արեալ էր (» » էր, սիրել սիրվել էր)
կամ սիրեալ էր նորա

Յոզեակի թիւ

- «Արեալ էաք (սիրած, սիրված էինք, սիրել սիրվել էինք)
կամ սիրեալ էր մեր
- «Արեալ էիք (» » սիրված էիք, սիրել սիրվել էիք)
կամ սիրեալ էր ձեր
- «Արեալ էին (» » սիրված էին, սիրել սիրվել էին)
կամ սիրեալ էր նոյս

ԱՊԱՌՆԻ (ՍՏՈՐԱԴԱՍՄ ԿԱՄ 1)

Եզակի թիւ

սիրեալ իցեմ (սիրած, սիրված լինեմ)	կամ սիրեալ իցէ իւր-
սիրեալ իցես (» » լինես)	» » իցէ քո
սիրեալ իցէ (» » լինի)	» » իցէ նորա-

Յոզեալի թիւ

սիրեալ իցեմք (սիրած, սիրված լինենք)	կամ սիրեալ իցէ մեր-
սիրեալ իցէք (» » լինեք)	» » իցէ ձեր-
սիրեալ իցեն (» » լինեն)	» » իցէ նորա-
Ան էական բայով կազմված բաղդադրյալ ժամանակը հա-	
մապատասխանում է աշխարհաբարի վաղակատար և հարակա-	
տար ժամանակներին,	

Սիրեալ է իմ, քո, նորա և այլն ձեզերի մեջ ենթական-

դրված է սեռական եռություն:

բ) ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՑՈՎ

Անրկայ ժամ.

Եզակի թիւ

սիրելոց եմ (սիրելու կամ սիրվելու եմ)	
սիրելոց ես (» » » ես)	
սիրելոց է (» » » է)	

Յոզեալի թիւ

սիրելոց եմք (սիրելու կամ սիրվելու ենք)	
սիրելոց էք (» » » էք)	
սիրելոց են (» » » են)	

ԱՆՑՑԱԼ ԱՆԿԱՏԱՐ

սիրելոց էի (սիրելու կամ սիրվելու էի)	
սիրելոց էիք (» » » էիք)	
սիրելոց էր (» » » էր)	
սիրելոց էաք (սիրելու կամ սիրվելու էնք)	
սիրելոց էիք (» » » էիք)	
սիրելոց էին (» » » էին)	

ԱՊԱՌՆԻ (ԱՏՈՐՅԴԱՍ. ԿԱՄ I)

Եզակի բիւ

սիրելոց իցեմ (սիրելու, սիրվելու լինեմ, կլինեմ)
 սիրելոց իցես (» » լինես, կլինես)
 սիրելոց իցէ (» » լինե, կլինե)

Յոզնակի բիւ

սիրելոց իցեմք (սիրելու, սիրվելու լինենք, կլինենք)
 սիրելոց իցէք (» » լինեք, կլինեք)
 սիրելոց իցեն (» » լինեն, կլինեն)

¶2. լինիմ քայլ

ա) ԱՆՑՑԱԼ ԴԵՐԲԱՑՈՎ

Ներկայ

սիրեալ լինիմ (սիրվում եմ, սիրած, սիրված եմ լինում)
 սիրեալ լինիս (» ես, » » ես »)
 սիրեալ լինի (» է, » » » է »)

սիրեալ լինիմք (սիրվում ենք, սիրած, սիրված ենք լինում)
 սիրեալ լինէիք (սիրվում էք, սիրած, սիրված եք լինում)
 սիրեալ լինին (սիրվում են, սիրած, սիրված են լինում)

ԱՆՑՑԱԼ ԱՆԿԱՏԱՐ

սիրեալ լինէի (սիրվում էի, սիրած, սիրված էի լինում)
 սիրեալ լինէիս (» էիր, սիրած, սիրված էիր լինում)
 սիրեալ լինէի (» էիր, սիրած, սիրված էր լինում)

սիրեալ լինէուք (սիրվում էինք, սիրած, սիրված էինք լինում)
 սիրեալ լինէիք (» էիք, » » էիք լինում)
 սիրեալ լինէին (» էին » » էին լինում)

ԱՆՑԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼ

սիրեալ եղէ (սիրած, սիրված, եղա, սիրվեցի) •
սիրեալ եղձը (սիրած, սիրված եղալ, սիրվեցիք)
սիրեալ եղն (սիրած, սիրված եղալ, սիրվեցի)
սիրեալ եղաք (սիրած, սիրված եղանք, սիրվեցինք)
սիրեալ եղէք (սիրած, սիրված եղաք, սիրվեցիք)
սիրեալ եղհն (սիրած, սիրված եղան, սիրվեցին)

ԱՊԱՌՆԻ (ՍՏՈՐՄԴ. 1)

սիրեալ լինիցիմ, լիցիմ (սիրած, սիրված լինիմ, կլինիմ)
սիրեալ լինիցիս, լիցիս (» » լինիս, կլինիս)
սիրեալ լինիցի, լիցի (» » լինի, կլինի)
սիրեալ լինիցիմք, լիցիմք (սիրած, սիրված լինինք, կլինինք)
սիրեալ լինիցիք, լիցիք (» » լինիք, կլինիք)
սիրեալ լինիցին լիցին (» » լինին, կլինին)

ՀՐԱՄԱՅՑԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

1. ԴՐԱԿԱՆ

Եղալի

Յոզեալի

սիրեալ լիր (սիրած, սիրված եղիր) սիրեալ լիրնեք (սիրած,
սիրված եղիք) Ապառնի (ստորադ., I)

սիրեալ լինիջիր (սիրած, սիրված կլինիս) սիրեալ լինիջիք
(սիրած, սիրված կլինիք)

Ապառնի (սահման, II)

սիրեալ լիջիր (սիրած, սիրված ոլիտի լինիս) սիրեալ լիջիք
(սիրած, սիրված ոլիտի լինիք)

2. ԺԼՍՏԱԿԱՆ ԿԱՄ ԱՐԳԵԼԱԿԱՆ

Մի լինիր սիրեալ (մի լինիր սիրած, սիրված) մի լինիք սիր-
եալ (մի լինիք սիրած, սիրված)

Բաղադրյալ ժամանակներն արտահայտում են թե կը ավորական և թե ներգործական իմաստ:

Բայիրը կրավորական ձեռվ արտահայտելու համար գործածվում է լինիմ բայով և անցյալ զերբայով. այսպես անեսալ լինիմ=տեսնվում եմ, սիրեալ լինիմ=սիրվում եմ և այլն:

Անցյալ դերբայով (օր. զրեալ) կազմված բաղադրյալ ժամանակների զործածության ընթացքում շատ հաճախ եական բայը չի գրվում, այլ հասկացվում է մտքով: Օրինակ՝ երուանդայ շինեալ գքաղաքն (փոխանակ՝ երուանդայ շինեալ էր քարգաքն):

ՇԻՆՈՒԱԾ ԿԱՐՆՈՅ ՔԱՂԱՔԻՆ, ՈՐ ԿՈԶԵՑԱԿ ԹԷՌԴՈՒԹՈՒՄ

Անատոլեայ գորավարի ընկալեալ զհրամանն արքունի, և եկեալ յաշխարհս մեր և շրջեալ ընդ բազում կողմանս մեր, հաճի ի գաւառին Կարնոյ, իբրև ի միջոցի, շինել զքաղաքն արգաւանդահող, շատաջուր և բերբի. իբր միջոց վարկուցեալ ըզգայրսն, ոչ կարի ի բացեայ ի տեղեացն, ուր նիրատայ մասինն ինչ բղխեն ազբերք ականց և հանգարտ գնացիւք յաւաջացեալ ծովանան մօրաբար երեսութիւք. յորում անբաւութիւնք ձկանց և զանազան հաւուց ճարակաւորաց, յորոց ի ձուոց միայն կերակըրեալ լինէին ընակիչքն: Եւ գեղերք մօրին շամբք և բազմութիւն եղեգանց. և գաշտքն ունին զթանձրութիւն խոսոց. և զքաջաբերութիւն սերմանաւոր պտղոց: Եւ լերինքն լի են երէովք կճղակաբաշխիւք և որոճայնովք. նա և զանանոց պաճարութագուցաննն, մեծահասակս, քաջամարմինս և յոյրս ցուցանեն համակեալս ի գիրութիւն:

Եւ առ ստորոտով մի գեղեցկանիստ լերինն զտեալ բառ զում աղբերս ականակիտս և մանունս բղխեալ անդ ետեղապես աց զքաղաքն. զորով շրջաքակեալ խոր փոսիւ անդնդալիթ հաստատեաց զհիմունս պատուարին, և ի վերայ բարձրաբերձ աշտարակս ահազինս շինեաց, յորոց զառաջինն. Թէոդոս անուանեաց ի պատիւ թէոդոսի: Եւ ի նմանէ անդը շինեաց աշտարակս ժայռաւորս իբրև զնաւացուկս, և առանց գոգաւոր խորշիւք, որք ընդգէմ հային լերինն: Սապէս և ընդգէմ գաշտին հիւսիսոց. իսկ ընդգէմ արեւելից և արևմտից կանգնեաց աշտարակս բոլորաձևս: Եւ ի մէջ քաղաքին ի բարձրաւանդակ վայրիւ

մթերանոցս բազմապատիկս շինեաց և Աւգոստիոն անուանեաց ի
պատիւ Աւգոստոսի: Եւ այլ ջուրս ընդ յոլով տեղիս ածեալ մը-
տոյց անյայտ գնացիւք: Եւ ելից զինու և պահապան գնդիւք
զքաղաքն և անուանեաց թէոդորոլիս, զի յիշատակաւ քաղաքին
անմահ լիցի անունն: Եւ ի վերոյ ջերմն բղխեալ աղբերացն յար-
կս ի վիմատաշ քարանց շինեաց (Մոլսէս Խորենացի):

Հաճի—հավանում է, ախորժում
է իրեն ի միջոցի—որպես մեջ-
տեղի
Միջոց—մեջտեղ, միջին գիրք
ունեցող
Վարկուցեալ—համարելով
Վարկանիլ—համարել
Իր միջոց վարկուցեալ զվայր-
ուն—այն տեղերը համարելով
որպիս մեջտեղ, միջին գիրք
ունեցող
Կարի—շատ
Ի բացեայ—հեռու
Ի բացեայ ի տեղեացն—հեռու
տեղերից
Ոչ կարի ի բացեայ ի տեղեացն—
ոչ շատ հեռու այն տեղերից
Ուր եփրատայ մասինն ինչ բրդ-
խեն աղբերքականց—որտեղից
բրդում են եփրատի մի քա-
նի աղբյուրները
Հանգարտ գնացիւք—հանգարտ
ընթացքով (հոսանքով)
Յառաջացեալ—տառաջ գնալով
Ծովանան—ծովանում են
Ծովանան մօրաբար երեսութիւք—
ծովանում են, տղմուտի տեսք
ստանում
Երեսոյթ, —երեսոյթ, տեսք, նմա-
նություն

Ամբաւութիւնք ձկանց—ան-
հաշիվ ձկներ
Զանազան հաւուց ճարակաւո-
րաց—զանազան խոտակիր
թռչուններ
Յորոց ի ձուոց միայն կերս կե-
րակրեալ լինէին բնակիչքն—
որոնց ձկերով միայն կերտ-
կրվում էին բնակիչները
Բաջարեր—լավ բերք ունեցող
կճղարաբաշխ— թաթաներձ,
կճղակավոր
Որոճային, այնոյ—որոճող
Պաճար, ի, աւ, աց—պախրա-
տավար
Նա և զանասուն պաճարս
բազմացուցանեն, մեծահա-
սակս, քաղամարմինս—բազ-
մացնում են հաղթահասակ
խոշոր պախրաներ
Յոյըս—հաստ, լիքը մարմնով,
Համակեալս ի գիրութեան—
գեր
Աղբիւրս ականակիտս—ակա-
նակիտ աղբյուրներ
Մանունս (մանը, մանու, մա-
նունք)—մանը
Ետեղագրեաց—զծագրեց, գծեց
Զորով շրջափակեաց—նրան
շրջապատեց

Անդնդալիեր—խորը հիմք գլւ-
րած

Անդնդալիը հաստատեաց զիմ-
մունս պատուարին—շատ խորը
զրեց պատվարի հիմքը

Պատուար—պատ

Բարձրարերձ—ինիստ բարձր
Նաւացուուկ—նաւի քիթը

Ի նմանէ անդը—նրանցից այն
կողմ

Շինեաց աշտարակս ժայռաւորս
—շինեց ժայռաձեզ աշտարակ-
ներ

Իրրե զնաւացուուկս—նավերի
ցուուկների (քթերի) նման

Եւ ի վերայ ջերմն բղխեալ աղբե-
րաց—ջերմ բղխող աղբյուր-
ների (ջերմուկների) վրա

Առանցք, բառանցից, իւք)—ցըց-
վածք, անցնելու տեղ, գատարկ
տեղ (պատի մեջ)

Եւ առանցս գոգաւոր խորշիւք
—և անցքեր գոգավոր (ներս,
ընկած) խորշերով

Աշտարակս բոլորաձևս—բոլո-
րակաձև աշտարակներ

Սապէս և ընդդէմ գաշտին—
այսպիս և գեղի հյուսիսային
գաշտը նայող կողմը

Եւ այլ ջուրս ընդ յոլով տեղիս
և ուրիշ ջրեր շատ տեղերով

Անյայտ զնացիւք—անհայտ
ուղիներով

Ածեալ մտոյց—բերեց (բերե-
լով) մտցրեց:

Եւ ելից զինու և պահապան գըն-
դիւք զքաղաքն—և քաղաքը
լցրեց (ելից) զենքով և պա-
հապան զնդերով

Ելից (լնուլ լցնել)—լցի, լցեր,
լից կամ ելից-լցնել

Շինեաց յարկս—շինեց տուն,
ծածք, դստիկոն

Ի վիմատաշ քարանց—տաշած
քարերից

Դաս ԻԱ.

Եւ բազմանայր գոչումն աղաղակի նոցա, մինչև ինքնին
թագաւորն ականատես լինէր իրացն յանդիմանութեան, և ան-
գէն վազվաղակի երդմամբ հաստատէր և ասէր. «Ոչ թողացու-
ցից ձեզ, մինչև կատարես ջիք զամենայն կամս հրամանաց ի-
մոց»:

Եւ ահա իշխանութիւն առեալ չարաչար սպասաւորացն,
զչորս զինուորսն ի բուն աւազացն մատուցին ի փորձութիւնս
տանջանաց, Եւ զառաջեալ զատեալ բազում հարուածովք, նովին
կապանօք անցուցին ի տեղիս արգելանին իսկ այլոցն խարէու-
թեամբ առ ժամանակ մի թողութիւն արարեալ և զամենայն

**Վասուն պատճառս արկանէր գլազելովքն. և զայս առնէր սա-
ռանայական խրառուն (Եղիշէ):**

**Քոչումն ազաղակի—զոռում զու- Կապել կապեալ (կապելոյ, կա-
չումը պիտի կապելոց) շղթայա-
կապեալը**

**Ֆրոցն յանդիմանութեան—մե-
զապրանքը
Անդէն—նույն տեղը, նշանա-
կում է նաեւի իսկույն, շու-
տով**

Գաղփաղակի—շուտով

**Կամս հրամանաց իմոց—իմ
կամքն ու հրամանը**

**Ֆշանութիւն առեալ—թույլ-
տվություն ստացան (ստա-
նալով)**

**Զարաչար սպասաւորացն—չար
պաշտոնյաները**

**Մոլասաւոր—ծառա, գործակալ,
պաշտոնյա**

**Ք բուն աւագացն—իսկական ա-
վագներից, մեծերից**

**Մատուցին ի փորձութիւնս տան-
ջանաց—մատնեցին փորձանքի
և տանջանքի**

**Զառաջեաւ դատեալ—առջեվը
չարչարելով**

**Վնասուն պատճառս—հանցան-
քի պատճառները**

**Վնս—հանցանք, չարիք, փաս-
(փնաս, փասու, փասուց կամ
փասից)**

**Կապել կապեալ (կապելոյ, կա-
պեալը, կապելոց) շղթայա-
կապ անել, շղթայված
Զայս առնէր—այս բանն ա-
նում էր.**

**Սատանայական խրառուն—
սատանայական խորհրդով,
գիտությամբ**

**Նովին կապանօք (նոյն կա-
պանօք)—նույն շղթաներով**

Տեղի արդելանի—բանտ

**Անցուցին ի տեղիս արգելա-
նին—տարան բանտ, բան-
տարկեցին**

**Անցուցին (անցուցանել)—անց-
կացնել**

**Թողութիւն արարեալ (թողու-
թիւն առնել)—ներելով (նե-
րել)**

Արկանէր (արկանել)—գցել

**Արկանել զկապելովքն—գը-
ցում էր կապյալների (շըդ-
թայվածների) վրա**

Առնել—անել

**Խրատ—խորհուրդ, խրատ,
կարգ**

ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆ

**Ածականները գրաբարում գրվում են գոյականներից ա-
ռաջ կամ հետո: Սյսպես՝ գոյականներից առաջ—չարաչար սպա-
ռաւոր, ի բուն աւագացն, առատ պարզեց, բազում հարուածովք,
գոյականներից հետո—պաշտօնեաց ձախակողմեան, արանց
քաջաց, գիտնոց և այլն:**

Նախադաս ածականը չի հոլովում, այլ մեռմ է տնօթութուն և հայցական, բացառական և ներգոյական հոլովերի նախադասներն առնում է իր վրա Օրբնակ՝

Եղակի քիւ

յոզե. թիւ

Ուղղ.	առաստ պարզեն	առաստ պարզենք
Ա.	առաստ պարզենի	առաստ պարզենաց
Տ.	առաստ պարզենի	առաստ պարզենաց
Հ.	զառաստ պարզեն	զառաստ պարզեն
Բ.	յառաստ պարզենէ	յառաստ պարզենաց
Գ.	առաստ պարզենեւ	առաստ պարզենօք
Ն.	յառաստ պարզենի	յառաստ պարզեն

Մանոր. Եթե ածականը միավանկ է և նախադասառ կարող է համաձայնել հոլովով և թվով. այսպիս՝ մեծ քաղաք, մեծի քաղաքի, մեծաւ քաղաքաւ, մեծաց քաղաք քաց և այլն:

Հետադաս ածականը համաձայնում է նախադաս գոյականի հետ թվով և հոլովով: Այս դեպքում նույնպես հայցական, բացառական և ներգոյական հոլովերի նախադասներն առնում է նախադաս գոյականը: Այսպէս՝

Եղակի քիւ

յոզեակի թիւ

Ուղղ.	քաղաքք մեծ	քաղաքք մեծք
Ա.	քաղաքի մեծի	քաղաքաց մեծաց
Տ.	քաղաքի մեծի	քաղաքաց մեծաց
Հ.	զքաղաք մեծ	զքաղաքս մեծս
Բ.	ի քաղաքէ մեծէ	ի քաղաքաց մեծաց
Գ.	քաղաքքաւ մեծաւ	քաղաքքաւ (օք) մեծաւք
Ն.	ի քաղաքի մեծի	ի քաղաքս մեծս

Կամ

Եղակի

յոզեակի

Ուղղ.	բան իմաստուն	բանք իմաստունք
Ա.	բանի իմաստնոց	բանից իմաստնոց
Տ.	բանի իմաստնոց	բանոց իմաստնոց
Հ.	զբան իմաստուն	զբանս իմաստունս
Բ.	ի բանէ իմաստնոց	ի բանից իմաստնոց
Գ.	բանիւ իմաստնով	բանիւք իմաստնովք
Ն.	ի բանէ իմաստնոց	ի բանու իմաստունս

Հատուկ անունների վրա դրված նախադաս ածականներն առնում են և հոգը: Օրինակ՝ քաջն Արտաշէս, սրբոյն Մովիսիսի ժորենացոյ, բազմաժողովն Արտաշատ, բարագագաթն Արագած:

Հատուկ անունների վրա դրված ածականները համաձայն առնում են թվով և հոլովով, անկախ այն բանից նախադաս են, թե հետագա: Օրինակ՝ Սահակայ Պարքի, ի Սահակայ Պարքի, Պարքին Սահակայ, ի մեծէն Մեսրոպայ, ի Մեսրոպայ մեծէն, և այլն:

ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Ածականների աստիճանները գրաբարում նույնպես երեք չեն՝ դրական, համեմատական (բազզատական) և զերադրական:

